

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԵՂՎԱՐԴԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
(ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գլխավոր տեղեկություն

Համար	N 978-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Հիմնական ակտ (21.09.2007-31.10.2025)
Կարգավիճակ	Չի գործում
Սկզբնաղբյուր	ՀՀՊՏ 2007.09.20/47.1 Հող.965.1
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	09.08.2007
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	10.09.2007
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	21.09.2007
Ուժը կորցնելու ամսաթիվ	31.10.2025

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 օգոստոսի 2007 թվականի N 978-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԵՂՎԱՐՂԻ ԶԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Զաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ, 14.3-րդ և 17-րդ հոդվածներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը (այսուհետ՝ գլխավոր հատակագիծ)՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին՝ գլխավոր հատակագծի իրականացման մոնիթորինգն ապահովել համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 31-ի «Պետական քաղաքաշինական կադաստրի վարման և քաղաքաշինական գործունեության մոնիթորինգի անցկացման կարգը հաստատելու մասին» N 802 որոշմամբ սահմանված կարգի:
3. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների ղեկավարներին՝ ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումները՝ ըստ առաջնահերթության:
4. Առաջարկել Եղվարդի քաղաքապետին համայնքի զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման միջոցառումները՝ ըստ առաջնահերթության:
5. Սահմանել, որ գլխավոր հատակագծով նախատեսված հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները կատարվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ըստ գլխավոր հատակագծով նախատեսված կառուցապատման հերթականության:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության վարչապետ

Ս. Սարգսյան

2007 թ. սեպտեմբերի 10
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2007 թվականի
օգոստոսի 9-ի N 978-Ն որոշման

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԵՂՎԱՐՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽՄԱԸ

Գ Լ ՈՒ Խ 1

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԶԱՂԱՔԱՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Համայնքի դիրքը տարաբնակեցման համակարգում և կառուցվածքահատակագծային զարգացման պայմանները
2. Տարածքի համալիր գնահատական
- 2.1. Համայնքի բնական պայմանները, բուժական և ռեկրեացիոն ռեսուրսները
- 2.2. Կոտայքի մարզի լանդշաֆտային բնութագիրը և օգտակար հանածոները
3. Պատմամշակութային հուշարձանները
4. Հեռանկարային կառուցվածքահատակագծային կայուն զարգացման ուղղությունները
5. Տրանսպորտ
6. Շրջակա միջավայրի պահպանություն
7. Ինժեներական սարքավորումներ
- 7.1. Ջրամատակարարում
- 7.2. Կենցաղային կոյուղի
- 7.3. Հեղեղատար կոյուղի
- 7.4. Ոռոգում
- 7.5. Գազամատակարարում և ջեռուցում
- 7.6. Էլեկտրամատակարարումը
- 7.7. Կապի ցանցեր

Գ Լ ՈՒ Խ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Նախագծի նպատակները
2. Կիրառման բնագավառը
3. Նախագծի կառուցվածքը
4. Գոտևորման նախագծի կապը գլխավոր հատակագծի հետ
5. Տարածքի փաստացի օգտագործման և նախագծային հիմնական բնութագրեր
6. Գոտիներում թույլատրելի օգտագործումների (կառուցապատումների) և սահմանափակումների հիմնավորումներ
7. Օգտագործման ձևերն ու սահմանափակումներն ըստ գոտիների
8. Կառուցապատման կանոններ
9. Տերմիններ և սահմանումներ:

ԳՇԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

1. Դիրքը մարզի տարաբնակեցման համակարգում
2. (Տարաբնակեցման) Տարածքի համալիր գնահատական
3. (Տարաբնակեցման) Հատուկ պահպանվող տարածքներ
4. (Տարաբնակեցման) Կենդանիների տեղաբաշխում
5. (Տարաբնակեցման) Քամիների ուղղությունները
6. (Տարաբնակեցման) Հումքային ռեսուրսներ
7. Տարածքի փաստացի օգտագործման հատակագիծ/հենակետային հատակագիծ/
8. Համալիր գնահատման հատակագիծ
9. Սեփականության սուբյեկտներ
10. Լանդշաֆտի կազմակերպման հատակագիծ
11. Ինժեներական ենթակառուցվածքների հատակագիծ
12. Տրանսպորտային սխեմա
13. Պատմամշակութային հուշարձաններ
14. Տարածքի զարգացման հատակագիծ (հիմնական գծագիր)
15. Գոտևորման նախագիծ
16. Կառուցապատման հերթականություն
17. Մշակութային ենթակառուցվածքների սպասարկման և սանիտարական գոտու սահմաններ
18. Հողերի նպատակային նշանակության տրանսֆորմացիա

ՆԱԽՄԱԲԱՆ

Եղվարդ քաղաքի գլխավոր հատակագծի մշակման հիմնական նպատակը քաղաքի հեռանկարային տնտեսական զարգացման և տարածքային աճի ուղղությունների, տարածքների ֆունկցիոնալ նշանակության որոշումն է՝ տրանսպորտային, ինժեներական, տեխնիկական ենթակառուցվածքների սկզբունքային լուծումներով, բնապահպանական լայն համալիրի կիրառումով, տարածքների հողօգտագործման և կառուցապատման պարտադիր պահանջների սահմանումով:

Եղվարդ քաղաքային համայնքի գլխավոր հատակագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվերով (պայմանագիր N ՄԲ ԱՇՁԲ 05-94) և նախագծային առաջադրանքով:

Նախագծման համար ուղեցույց են ծառայել.

- ՀՀ օրենքը քաղաքաշինության մասին:
- ՀՀ հողային օրենսգիրքը:
- ՀՀ անտառային օրենսգիրքը:
- Շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննության մասին ՀՀ օրենքը:
- Շրջակա միջավայրի պահպանության ՀՀ օրենսդրության հիմունքները:
- Կարգ ՀՀ քաղաքային և գյուղական համայնքների գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման (հաստատված ՀՀ կառավարության 02.05.03 N 609 որոշմամբ):
- Կարգ բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության համաձայնեցման, հաստատման և փոփոխման (հաստատված 14.05.01 N 408 որոշմամբ):
- Տարբեր տարիներին նախագծային ինստիտուտներում մշակված Եղվարդ քաղաքի գլխավոր հատակագծերը և քաղաքի տարբեր թաղամասերի կառուցապատման նախագծերը:
- ՀՀ կառավարության, շահագրգիռ նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, ՀՀ Կոտայքի մարզպետարանի, Եղվարդի քաղաքապետարանի, տարբեր կազմակերպությունների՝ Եղվարդ քաղաքին վերաբերող ելակետային նյութերը, որոշումները, ծրագրային փաստաթղթերը:
- ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կադաստրային քարտեզները:
- «Հայիողշին» ՊՈԱԿ-ում մշակված հողօգտագործման քարտեզները:
- «Հայնախագիծ» ԲԲԸ-ում մշակված և Կառավարության կողմից հաստատված (10 ապրիլի 2003 թ. N 610-Ն) «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագիծ» հիմնադրույթները:
- Եղվարդ քաղաքային համայնքի տարածքի սեյսմաշրջանացման քարտեզը (մշակված «ՍՊՀ-ՍԾ» ՊՈԱԿ 2006 թ.):

Նախագծում հաշվի են առնված նաև ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի և Բնական և մշակութային ժառանգության պահպանման պիլոտային նախագծի դրույթները, ՍԵՄԱԹ-ի Եվրոպական մայրցամաքի կայուն զարգացման հիմնադրային սկզբունքների, Օրիոնսի կոնվենցիայի, Եվրոպական լանդշաֆտային կոնվենցիայի, Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի, և այլ փաստաթղթերի միջոցառումների և տարածքային պլանավորման փոխկապակցվածության սկզբունքները:

Գ Լ ՈՒ Խ 1

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾԱՀԱՏԱԿԱԳՇԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՐՔԸ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՀԱՏԱԿԱԳՇԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Եղվարդի տարածահատակագծային և սոցիալ-տնտեսական ռազմավարական զարգացման հիմնախնդիրները դիտարկվել են ՀՀ Կոտայքի մարզի շրջանակում «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագիծ» հիմնադրույթներում: «Երևանի ագլոմերացիայի տարածքային հատակագծման նախագծում» Եղվարդ համայնքի տարածքը կազմում է Երևանի քաղաքամերձ գոտու մի մասը և ընգրկվում է Երևանի ագլոմերացիայի հատուկ կարգավորման վարչակարգ ունեցող սահմանափակ զարգացման գոտում: «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագիծ» մարզային տարաբնակեցման համակարգում Եղվարդին վերապահվում է երկրորդական կենտրոնի դերը:

Եղվարդ քաղաքը գտնվում է Արայի լեռան հարավային ստորոտում, Եղվարդի սարավանդում, Երևանից 18կմ հյուսիս-արևմուտք, Աշտարակ-Արզնի խճուղու վրա: Հեռու լինելով տարանցիկ մայրուղիներից, Եղվարդը և ՀՀ Կոտայքի մարզի, և Երևանի ագլոմերացիայի շրջանակում զբաղեցնում է համեմատաբար մեկուսացված դիրք և շրջապատված է հիմնականում գյուղատնտեսական նշանակության տարածքներով:

Սովետական շրջանում այստեղ կազմակերպվել էր մեծ արդյունաբերական հանգույց՝ խոշոր արտադրական գոտով, սակայն այսօր, արտադրամասերը հիմնականում չեն գործում, իսկ բնակչությունը հիմնականում զբաղված է սեփական հողատարածքներում:

Խոշոր, հասարակական նշանակության օբյեկտներն այսօր նույնպես չեն գործում, պարապուրդի են մատնված և կապիտալ վերանորոգման կարիք ունեն:

Եղվարդը հին բնակավայր է: Առաջին գրավոր տեղեկությունները կապված են 603-ի հայ-պարսկական պատերազմի հետ: Վիճակագրական վարչության տվյալներով բնակավայրի բնակչությունը այսօր կազմում է 14.5 հազ. մարդ: Եղվարդի վերջին գլխավոր հատակագիծը մշակվել է 1973 թ.՝ 16.0 հազ. մարդ բնակչության համար: Համայնքի գերադասելի առավելագույն բնակչությունը դեմոգրաֆիական լրիվ տարրողունակության դեպքում «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծով» սահմանափակվում է 20 հազար մարդով:

Համայնքի ընդհանուր տարածքը կազմում է 6722.2 հա: Այդ թվում՝ բնակավայրի տարածքը՝ 672.2, որից բնակելի կառուցապատումը կազմում է 436.6 հա: Բնակավայրի ռեյիեֆը հիմնականում հարթ է, թեքված դեպի հարավ: Ինժեներաշինարարական պայմանները բարենպաստ են: Հիմնականում տարածված են ժայռային և կիսաժայռային ապարներ, ծածկված մակերեսային նստվածքների (խճեր, գաքքար, կավավազ և այլն) փոքր շերտով (3-5մ): Տարածքում նկատվում են մակերեսային հոսքեր, հեղեղատների առաջացում: Գրունտային ջրերը խորն են տեղադրված: Սեյսմիկ վտանգի մակարդակը գնահատվում է 0.2-0.36-ով: Ինժեներական ցանցերով ապահովվածություն մակարդակը ցածր է: Ռեզերվային տարածքների դեֆիցիտ է արձանագրվում կապված բարձրարժեք գյուղատնտեսական հողերի առկայության հետ: Քաղաքի հեռանկարային տարածական զարգացումը հնարավոր է միայն գյուղատնտեսական հողերի յուրացման հաշվին:

2. ՏԱՐԱԾՔԻ ՀԱՍՏԱԽԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ 2.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԵՂՎԱՐԴԻ ՏԱՐԱԾՆԵՐՁԱՆԻ ԲՆԱԿԱՆ ԲՈՒԺԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հայկական բարձրավանդակի արևելյան մասում, Արաքս գետի միջին հոսանքում, շրջապատված լեռնաշղթաներով գտնվում է մի մեծ գոգավորություն: Իր բնական և տնտեսական առանձնահատկություններով Արարատյան գոգավորությունը զբաղեցնում է յուրահատուկ տեղ ամբողջ Անդրկովկասում: Արարատյան հարթավայրը իրեն շրջապատող լեռների հետ կազմում է մի միասնական ամբողջություն: Արարատյան գոգավորությունում առանձնանում են երեք, բնական պայմաններով իրարից տարբերվող բարձրադիր գոտիներ՝ Արարատյան հարթավայր, Արարատյան հարթավայրի նախալեռներ և բարձրավանդակային գոտի: Հյուսիսից հարթավայրը շրջապատում է քառագյուղի Արագածը, արևելքից՝ Երևանի շրջակայքում երկու լայն աստիճանների ձևով աստիճանաբար իջնում է դեպի Արարատյան հարթավայր: Եղվարդի սարահարթը ծածկված է լեռնային գորշ և շագանակագույն հողերով: Սարահարթը հյուսիսային մասից պարփակված է Արայի լեռ հրաբխով, որի լանջերը գառիթափ իջնում են դեպի սարահարթ:

Արարատյան դաշտավայրի նախալեռնային գոտում Արագած և Արայի լեռ խոշոր հրաբուխների միջև տեղակայված է Եղվարդի սարահարթը: Այս սարահարթի բացարձակ բարձրությունները տատանվում են 1000-1500 մ սահմաններում: Ռեյիեֆը թույլ բլրակային-ալիքաձև է, որոշ տեղերում բարձրանում են առանձին շլակային կոներ: Սարահարթը դեպի հարավ և արևելք Երևանի շրջակայքում երկու լայն աստիճանների ձևով աստիճանաբար իջնում է դեպի Արարատյան հարթավայր: Եղվարդի սարահարթը ծածկված է լեռնային գորշ և շագանակագույն հողերով: Սարահարթը հյուսիսային մասից պարփակված է Արայի լեռ հրաբխով, որի լանջերը գառիթափ իջնում են դեպի սարահարթ:

Արայի լեռը կտրտված է բազմաթիվ ձորակներով, որոնք զարնանային ձևիայից և տեղումների ժամանակ վարարում են և, հողի մակերեսային շերտը վլանալով, հսկայական քանակով տիղմ են տեղափոխում դեպի Եղվարդի սարահարթ: Հրաբխային ապարների ճեղքվածքներից ներծծվում է ձյան հալոցքի և տեղումների հսկայական քանակ և այդ է պատճառը, որ մակերեսային հոսք չի ձևավորվում: Հրաբխային Արայի լեռան լանջերով դեպի ցած ձգվում են մի շարք խոշոր և մանր հովիտներ, կանյոններ, ձորակներ: Արագածի զանգվածից դեպի արևելք գտնվում է Քասաղ գետի կանյոնը: Այս կանյոնը բաժանում է Արագածի լավաները հրաբխային Արայի լեռան լավաներից, որոնք վեր են խոյանում Եղվարդի սարահարթից մոտ 1000 մ բարձրության վրա: Քասաղ գետը ջրաբաժան է Նաիրիի /Կոտայք/ և Ապարանի /Արագածոտն/ տարածաշրջանների միջև: Քասաղը լեռնային գետ է, հրաբխային ապարները ձևավորել են գեղատեսիլ հովիտ - կիրճ, որը համարվում է հանրապետության տեսարժան վայրերից մեկը: Արայի լեռան արևմտյան լանջերը պատված են արևելյան կաղնու նոսր անտառներով: Հարավային և հարավ-արևելյան լանջերը թեքված են դեպի Եղվարդի սարահարթը, աստիճանաբար իջնում են դեպի հարավ-արևելք և աննկատ ծովում մայրաքաղաքի լանդշաֆտի հետ: Դրանք միևնույն լեռան զագաթը ծածկված են թփուտային և ալպիական բուսականությամբ: Ջրային ռեսուրսներով տեղանքը հարուստ է: Կոտայքի ռեյիեֆը ձևավորվել է երիտասարդ ջրաբերուկներից:

Եղվարդը գտնվում է Կոտայքի մարզի Նաիրիի տարածաշրջանում, ծովի մակերևույթից 1317 մ բարձրության վրա, Եղվարդի սարահարթի համարյա կենտրոնում, չոր տափաստանային, կիսատափաստանային գոտում: Հաղորդակցությունը մայրաքաղաքի, ինչպես նաև Աշտարակի և Կոտայքի մյուս շրջանների հետ ավտոմոբիլային է, բարեկարգ ճանապարհային մագիստրալներով:

ԿԼԻՄԱ

Կլիման արտահայտված ցամաքային է՝ շատ շոգ, չոր ամառ, չափավոր ցուրտ, անհողմ ձնառատ ձմեռ: Եղվարդի սարահարթի կլիման հիմնականում ձևավորվում է միջին լայնությունների օդային զանգվածների ազդեցության ներքո: Տաք սեզոնի եղանակները արդյունք են տեղանքի ռադիացիոն տաքացման և, հատկապես, ցամաքային արևադարձային օդային զանգվածների ազդեցության: Իսկ ձմռանը իշխում են բևեռային օդային զանգվածները, ինչպես նաև Սիբիրյան անտիցիկլոնի (բարձր ճնշման բարիկ դաշտ) արևմտյան լեզվակների ներխուժումները: Չի բացառվում նաև երկրի մակերեսից էֆեկտիվ ճառագայթարձակումը: Աշված գործոնները հանգեցնում են կլիմայի արտահայտված ցամաքայնությանը: Կլիմայի յուրահատկությունը արտահայտված կոնտինենտալ պայմաններն են, որով էլ Եղվարդի տարածաշրջանը տարբերվում է հանրապետության մյուս շրջաններից (Լոռի, Տավուշ, Սևանի ավազան, Սյունիք և այլն):

Տարեկան ջեմաստիճանային ամպլիտուդը մոտ 30° է, իսկ երևանում՝ 31°: Թերմիկ ռեժիմը բավական բարձր է՝ տարեկան միջին ջերմաստիճանը 9.1°, ամենատաք ամսվայում 22.7° (օգոստոս), իսկ միջին հունվարյանը՝ -6.1° (ադյունակներ N 4, 5): Տեղումների տարեկան քանակը 407 մմ է, տարվա տաք կեսին (IV-X/ ընդամենը 231 մմ, իսկ ցուրտ կեսին /XI-III/՝ 176 մմ: Առավելագույն արժեքները դիտվում են մարտ-ապրիլ-մայիս ամիսներին՝ 151 մմ (ադյունակ N 7): Հարաբերական խոնավության ցուցանիշներն ունեն արտահայտված օրինաչափություն՝ ձմռանը առավելագույն 77-78%, ամռանը՝ 44-47%: Տարեկան միջին արժեքը 62% (ադյունակ N 6): Շրջանն առանձնանում է արևի ճառագայթային էներգիայի առատությամբ, արևափայլքի տարեկան տևողությունը 2456 ժամ է (ադյունակ N 1): Արևի ճառագայթային էներգիայի այսպիսի առատությունը հանգեցնում է ուլտրամանուշակագույն ճառագայթների ինտենսիվության մաքսիմալ արժեքների: Անհրաժեշտ է շեշտել, որ

այստեղ ուղտամանուշակագույն ճառագայթների քաղցը բացառվում է: Իսկ առանց արևի օրերի թիվը տարեկան 39 է, մայիսից մինչև հոկտեմբեր ոչ մի օր չի դիտվում առանց արևի /աղյուսակ N 2/: Քամու ռեժիմը տարբեր սեզոններում տարբեր արժեք ունի: Քամու միջին տարեկան արագությունը 2,8 մ/վրկ է, ամառը դիտվում է առավելագույն՝ 5,2 մ/վրկ /VII-VIII/, իսկ ձմռանը՝ նվազագույն՝ 1,1-1,4 մ/վրկ արագություն (աղյուսակ N 8): Ամբողջ տարվա ընթացքում գերիշխում են հյուսիս- արևելյան և հարավ-արևմտյան ուղղության քամիները (աղյուսակ N 9):

Ձմեռը չափավոր ցուրտ է, առանձին տարիներին՝ «թույլ սառնամանիքային»: Իշխում է ձմեռային եղանակների անտիցիկլոնային տիպը՝ անհողմ շտիլային քամու ռեժիմ: 15 օր ամեն ամսվա ընթացքում դիտվում են տաքացումներով եղանակներ, երբ օրվա ընթացքում օդի ջերմաստիճանը բարձրանում է 0°-ից, դիտվում է ձյան շերտի քայքայում: Ձմեռային եղանակային ռեժիմը ունի շատ կայուն բնույթ: Առանձին տարիներին, երբ Արարատյան դաշտավայր են թափանցում Սիբիրյան անտիցիկլոնի լեզվակները կամ արկտիկական օդային զանգվածները, դիտվում է «զգալի սառնամանիքներով» եղանակային տիպը (5 օր), երբ միջին օրական ջերմաստիճանը գտնվում է -12,5--22,5° սահմաններում: Արևային չափավոր սառը օդի ոչ շատ ցածր ջերմաստիճանով եղանակի զուգակցումը ձմեռային բնապատկերի գեղեցկության հուզական ներգործության հետ, անկասկած կարող է բարենպաստ ազդեցություն ունենալ մարդու օրգանիզմի վրա, հատկապես անող ղեռահաս օրգանիզմի վրա:

Ձմեռը համեմատաբար կարճ է՝ 93 օր, սկսվում է դեկտեմբերի առաջին տասնօրյակից և տևում մինչև մարտի առաջին տասնօրյակը: Դեկտեմբերի երկրորդ տասնօրյակից ձևավորվում է կայուն ձյան շերտ, հասնելով մինչև 60 սմ բարձրության /աղյուսակներ NN 11, 12/:

Եղվարդը տարածական ձգվածությամբ, ծովի մակերևույթից ունեցած բարձրությամբ մոտ է մայրաքաղաքին: Եղանակային պայմանները և առանձին օդերևութաբանական արժեքները մոտ են Երևանի տվյալներին: Սակայն ձմռան ընթացքում ձյան ձևով դիտվող տեղումները ձևավորում են կայուն և բարձր ձյան շերտ: Այս առանձնահատկությունն արդյունք է ֆիզիկաաշխարհագրական դիրքի և լեռնագրության: Եղվարդում ձմռան սեզոնում դիտվում է օրինաչափության մի այլ խախտում ևս. երբ Երևանը ծածկված է ինվերսիոն ամպամած շերտով, Եղվարդում օդը համեմատաբար չոր է և մաքուր: Դիտվում են արևոտ, «չափավոր ցուրտ» եղանակներ:

Եղվարդը գտնվում է Արայի լեռան անմիջական ստորոտում, այստեղ են բացվում լեռան հարավային լանջերը, և լեռան զազաթի օդային զանգվածները, լինելով ավելի սառը և ավելի ծանր, մեծ թեքություն ունեցող լանջերով սահում են դեպի սարահարթ: Այս նույն պրոցեսն է տեղի ունենում նաև Արագածի զազաթին ձևավորված ավելի սառը և ծանր օդային զանգվածների հետ, որոնք իջնելով Ապարանի սարահարթ, հասնում են մինչև Եղվարդ: Ձմռանը մթնոլորտում թթվածնի պարունակությունն ունի առավելագույն արժեքներ՝ 260 գ/մ³ (աղյուսակ N 10): Թթվածնային ռեժիմը միանգամայն բավարար է մաքուր օդում ինչպես ծանր ֆիզիկական աշխատանք կատարելու, այնպես էլ ակտիվ սպորտային միջոցառումներին մասնակցելու համար: Ձեռուցման սեզոնն այստեղ սկսվում է Նոյեմբերի 1-5-ին և ավարտվում է ապրիլի 10-15-ին, տևում է 150-160 օր:

Գարունը համեմատաբար կարճ է, բաժանվում է երկու կեսի: Առաջին կեսը սառն է, խոնավ, անկայուն եղանակային ռեժիմով: Երկրորդը՝ տաք է, Միջերկրական ծովից ցիկլոնների շարքի հաճախակի անցումներով: Գարնանային տեղումների և օդի բարձր ջերմաստիճանի զուգակցումը նպաստում են ձյան ինտենսիվ հալոցքին, և Արայի լեռան լանջերի ձորակներ-հեղեղատները վարարում են, առաջացնելով հեղեղներ և վտանգ են ներկայացնում սարահարթի ցանքատարածությունների համար:

Ամառը ունի առավելագույն տևողություն՝ մայիսի առաջին տասնօրյակից մինչև հոկտեմբերի կեսը՝ 24 շաբաթ /168 օր/: Եղանակային բոլոր առանձնահատկություններն ամառվա սեզոնում պայմանավորված են հիմնականում ծածկող մակերեսի և մթնոլորտի շրջանառության փոխազդեցությամբ բարձր թերմիկ ֆոնի վրա: Սա բերում է «շատ շոգ, շատ չոր» և «շոգ չոր» եղանակների ձևավորմանը, որոնք միասին դիտվում են 25 օր ամսվա ընթացքում: Եղանակային ռեժիմը շատ կայուն է: Ամառային եղանակային ռեժիմը տարբերվում է Եղվարդին հատուկ առանձնահատկություններով՝ խապառ բացակայում են «անձրևոտ» և «թխպոտ» /ամպամած ամբողջ օրվա ընթացքում/ եղանակները: Կապված հիգրոթերմիկ պայմանների հետ՝ ամռանը մթնոլորտում նվազում է թթվածնի պարունակությունը մինչև 231 գ/մ³: Միանգամայն պարզ է, որ գյուղատնտեսությունը, բանջարանոցային բույսերի, ծառատեսակների մշակումը լրիվ կապված է արհեստական ոռոգման հետ, բնականը համարյա բացակայում է: Ամռանը միջոցառումներին կայուն օդային զանգվածների ջերմաստիճանային մոնիթորինգը և նվազումը և տեղական զանգվածների կոնդենսացման մակարդակի բարձրացումը Եղվարդում պայմանավորում են մթնոլորտային ֆրոնտների հազվադեպ անցումը:

ՎԼԻՄԱՅԱՐՈՒԹՅԱՆ ՕՂԵՐԵՎՈՒԹՅԱՆ ԴԱՅՄԱՆՆԵՐԸ

Ձմռանը կլիմայաբուժությունը ձեռք է բերում հատուկ նշանակություն, քանի որ այն նպաստում է այլ բուժական միջոցների թերապևտիկ ազդեցության մեծացմանը: Եղվարդի սարահարթը առանձնանում է բացառիկ բարենպաստ պայմաններով ձմեռային կլիմայաբուժության համար: Հունվար-փետրվարին 25 օր առանց սահմանափակումների կարելի է կիրառել ձմեռային կլիմայաբուժության բոլոր ձևերը: Տուրտ և ձնառատ ձմեռներին Եղվարդի տարածքի բնական տեռաստները կարելի է օգտագործել որպես դահուկակաղողներ (лыжня) և ցածր տրամագիծներ դահուկասպորտային միջոցառումների համար: Ձմեռվա սեզոնում կայուն ձյան ծածկի ամկայությունը ռեալ նախադրյալներ է ստեղծում ձմեռային սպորտային բազաների նախագծումների և տեղադրման համար: Արայի լեռան բարձրությունը և զառիթափ լանջերի ուղղածիզ թեքվածությունն օգտագործել հատուկ շինությունների նախագծումների համար պլաներային սպորտաձևի զարգացման նպատակով: Դեպի Արայի լեռան բարձունք նախագծել բազմաստիճան ճոպանուղիների կառուցում: Լեռան լանջերի տարբեր բարձրություններն օգտագործել դահուկասահնակային զբոսանքների համար, կեմպինգների, հյուրանոցների, կարճատև հանգստի օբյեկտների նախագծումներով:

Ամռան սեզոնում Եղվարդի կլիմայաբուժության պայմանները տարբերվում են Հայաստանի մյուս շրջաններից «կոմֆորտային» պայմանների զգալի քանակով: Այստեղ ապրիլի 20-ից արդեն դիտվում են «կոմֆորտային» լուսանքների համար պայմաններ, իսկ ԶԵՏ /9-16° սահմաններում մայիսին հասնում է 71%: Լուսանքները այս պայմաններում ունեն արդիֆիզիկոսիկ, կոֆոր բնույթ: Բնական պայմաններում մայիսից մինչև սեպտեմբեր ներառյալ գերակշռում են «կոմֆորտային» պայմաններ օդային լուսանքներ ընդունելու համար ժամը 13-ին: Մայիսին այդ պայմանները կազմում են 17%, իսկ հունիսին և օգոստոսին համապատասխանաբար 55 և 58% /աղյուսակներ N 13, 14/:

Մայիսից մինչև հոկտեմբերը ներառյալ կարելի է նշանակել նաև արևային լուսանքներ: Արևային լուսանքների «կոմֆորտային» պայմանների կրկնվածության տոկոսը նվազում է «դիսկոմֆորտային» /գերտաքացման, երբ (ԶԵՏ \geq 23°) գոնայի ամճան հետևանքով: 23°-ից բարձր ԶԵՏ-ի ժամանակ ստեղծվում են դիսկոմֆորտային պայմաններ, այսինքն վատանում են ջերմազգացողության պայմանները, տեղի է ունենում ինտենսիվ քրտնարտադրություն, գոյանում է խոնավությամբ հագեցած օդի շերտ, և այս ամենը բերում է նորմալ շնչառական պրոցեսի խանգարմանը: Հիպերինսույացիայից խուսափելու նպատակով խորհուրդ է տրվում կլիմայաբուժությունը նշանակել առավոտյան կամ կեսօրից հետո: Եղվարդում բացի շոգ եղանակներից ստեղծվում են նաև «տոթակեզ» (душные) եղանակներ, ինչի պատճառով բացառվում է օդային և արևային

լոգանքների ընդունումը ժամը 13-ին: Օրգանիզմի գերտաքացումից խուսափելու համար առաջարկվում է նաև կիրառել հանգստի, քնի, սպորտային և զվարճալի խաղերի ժամանակ օդի մասնակի շարժում ապահովող հատուկ սարքեր: Ներդնել արևաբուժության իմպուլսային մեթոդ՝ պտտվող տեսիլի կիրառմամբ: Իմպուլսային մեթոդը զգալի պակասեցնելով մեթետրոպ ռեակցիաների քանակը, պահպանում է ուլտրամանուշակագույն ճառագայթների բուժական էֆեկտը, ստեղծում է պայմաններ արևային լոգանքներ ընդունելու նաև կեսօրվա ժամերին: Ցերեկային ժամերին դիտվող դիսկոմֆորտային պայմանները օրվա երկրորդ կեսին մեղմանում են լեռնահովտային շրջանառության, այսինքն Արայի լեռան լանջերից դեպի սարահարթ սահող համեմատաբար սառը օդային զանգվածի ազդեցության պատճառով:

Առաջարկվում է օգտագործել հատուկ սարքավորումներ, որոնք ապահովում են կլիմայաբուժական տաղավարների օդի մասնակի շարժում, շինությունների ներսում, ինչպես նաև շրջապատող տարածքներում գերտաքացած օդի արհեստական սառեցում:

Այսպիսով՝

1. Միկրոկլիմայական պայմանների դիսկոմֆորտը մեղմելու համար անհրաժեշտ է մեկուսացնել բնակելի և սպասարկող շինություններն արևի ուղիղ ճառագայթների և գերտաքացած օդի ազդեցությունից:

2. Կիրառել միկրոկլիման մեղմացնող միջոցառումներ՝ պաշտպանական սարքեր շենքերի պատուհաններին, ատերիների լրացուցիչ կանաչապատում:

3. Բազմաթիվ և բազմաձև լողավազանների, շատրվանների, արհեստական միկրոջրվեժների, արհեստական լճակների նախագծումներ: Հաշվի առնելով ռելիեֆի բնույթը /թույլ բլրակային, միատարր/, առաջարկվում են նախագծումներ և շինարարություններ, առաջնություն տալով տուրիստական համալիրների, բուժական տուրիզմի օբյեկտների տեղադրմանն ու կառուցմանը:

4. Մայրաքաղաքը գերծանրաբեռնվածությունից բեռնաթափելու համար նշված օբյեկտների գերառեսչական և դեկլավարող մարմինների գրասենյակները տեղափոխել դեպի եղվարդի տարածաշրջան:

5. Բուսածածկից ազատ տարածքներն օգտագործել սպորտդահլիճների, հրապարակների շինարարության համար՝ սպորտային միջոցառումներ, վարժանքներ, մարզանքներ անցկացնելու նպատակով:

6. Հաշվի առնելով բուժիչ բնական ռեսուրսների (հանքային ջրեր, տորֆ) բացակայությունը և մայրաքաղաքի հետ տարածքային մոտիկությունը, ինչպես նաև ամառվա սեզոնում դիսկոմֆորտային պայմանները առաջարկվում է տարածաշրջանը չդիտել որպես առողջարանային կամ կարճատև և երկարատև հանգստի գոտի, ի տարբերություն Կոտայքի մարզի մյուս տարածաշրջանների: Որպես հանգստի և առողջարանային գոտի կարելի է իրացնել Արայի լեռան հարավային լանջերի անմիջապես ստորոտը 5 կմ լայնությամբ: Այստեղ միկրոկլիմայական, թերմիկ դինամիկ պայմաններն ավելի կոմֆորտային են: Նպատակահարմար է տուրիստական համալիրների կառուցում, մայրաքաղաքից համապատասխան օբյեկտների տեղափոխում եղվարդի շրջան:

7. Առաջարկվում է փոքր մասշտաբի պանսիոնատների, միկրոառողջարանային համալիրների կառուցում միջշրջանային, այսինքն տեղի և հարակից շրջանների ազգաբնակչության բուժումը և հանգստը կազմակերպելու համար:

Դիտվող լեռնահովտային քամուց և, բնականաբար, փոշուց պաշտպանման միջոց է միակցված կիսափակ կառուցապատումը, որի անկյունն ուղղված է դեպի քամիների գերիշխող ուղղության կողմը, ինչպես նաև ինտենսիվ ծառատնկումները մրգատու, դեկորատիվ, փշատերև և այլ ծառատեսակներով:

8. Բուժական տուրիզմի, ինչպես նաև ալպինիզմի զարգացման նպատակով անհրաժեշտ է բժշկական համապատասխան շինությունների տուրիստական բազաների, հյուրանոցների և այլ կուլտուր-կենցաղային օբյեկտների շինարարություն:

9. Տուրիզմի զարգացման և ընդլայնման համար նպատակահարմար է օգտագործել շրջապատի պատմաճարտարապետական, քաղաքակրթության վկայության վայրերը:

2.2. ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԱՆԴՆԱՑՄԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՀՎԱՄԾՈՆԵՐԸ

Մարզի հյուսիս-արևմտյան, հյուսիսային և արևելյան սահմանները շրջապատում են միջին բարձրության /1500-2800 մ/ լեռնագագաթներ, խորը մասնատված ճորերով և հովիտներով: Մարզի հարավային սահմանները ընդգրկում են Արարատյան գոգավորության նախալեռնային գոտին:

Ռելիեֆի հորիզոնական մասնատվածության խտությունը կազմում է 1,2-1,4 կմ/կմ²: Հովտածորակային ցանցի խտությունը՝ 2,0-4,0 հատ/կմ²: Մակերևույթի թեքության անկյունը տատանվում է 4-16° սահմաններում:

Մարզի հյուսիս-արևմտյան և հյուսիսային մասերում կլիման պայմանավորված է իր յուրահատուկ դիրքադրությամբ: Գտնվելով մերձարևադարձային բարձր լեռնային անտառային գոտում, այս տարածքի կլիման բնութագրվում է որպես բարեխառն՝ չափավոր տաք ամառներով և չափավոր սառը ձմեռներով: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 3,5° C, միջին ամսական ջերմաստիճանը հունվարին՝ -10,0° C, հուլիսին՝ 15,0° C: Միջին տարեկան բացարձակ մաքսիմումը կազմում է 31,0° C, մինիմումը՝ -24,0° C: Օդի 5,0° C միջին օրական ջերմաստիճանով ժամանակահատվածի տևողությունը կազմում է 170 օր, 10,0° C՝ 115 օր: Տեղումների տարեկան միջին քանակը մոտ 750 մմ է: 0,5 մմ և ավելի տեղումներով օրերի թիվը 70, իսկ 5 մմ և ավելի տեղումներով օրերի թիվը՝ 25:

Օդի տարեկան միջին հարաբերական խոնավությունը՝ 73%:

Արևափայլի տարեկան տևողությունը հասնում է 2200 ժամի: Ռադիացիոն տարեկան հաշվեկշիռը կազմում է 50,0 կկալ/սմ²: Այստեղ գերակշռում են արևմտյան քամիները: Քամու միջին արագությունը հիմնականում տատանվում է 0,1-3,0 մ/վրկ սահմաններում:

Մարզի հարավային սահմաններում կլիման արտահայտված ցամաքային է՝ շատ շոգ, չոր ամառ, չափավոր ցուրտ անհողմ ձմառառ ձմեռ: Այստեղ կլիման հիմնականում ձևավորվում է միջին լայնությունների օդային զանգվածների ազդեցության ներքո: Արևափայլի տարեկան տևողությունը 2456 ժամ է: Արևի ճառագայթային էներգիայի այսպիսի առատությունը հանգեցնում է ուլտրամանուշակագույն ճառագայթների ինտենսիվության մաքսիմալ արժեքների:

Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 9,5° C, միջին ամսական ջերմաստիճանը հունվարին՝ -5,0° C, հուլիսին՝ 20,0° C: Օդի տարեկան միջին հարաբերական խոնավությունը՝ 64%, հունվարին՝ 80%, հուլիսին՝ 50%: Արևափայլի տարեկան տևողությունը հասնում է 2700 ժամի: Ռադիացիոն տարեկան հաշվեկշիռը կազմում է 62,0 կկալ/սմ²: Այստեղ գերակշռում են հյուսիս-արևելյան և արևելյան քամիները: Քամու միջին արագությունը տատանվում է 0,1-0,5 մ/վրկ սահմաններում: 0-1 մ/վրկ արագությամբ քամով օրերի թիվը 69, 6 մ/վրկ և ավելի արագությամբ քամով օրերի թիվը՝ 26:

Մարզի անտառային հողերի մակերեսը կազմում է շուրջ 20 հազ հա:

Բնական անտառներն ունեն բնաշիվային ծագում և հիմնականում ներկայացված են կաղնու (80%-ից ավելի) ցածրաբնային տնկարկներով չորրորդ-հինգերորդ դասի տարիքի, հինգերորդ բուխտետի:

Անտառներում, բացի անտառ կազմող գլխավոր ծառատեսակից (կաղնի խոշորատեղ - *Quercus maqranthera* և վրացական - *Quercus iberica*) հանդիպում են նաև այլ ծառատեսակներ՝ բոխի, հացենի, լորենի, կեչի և բազմաթիվ այլ ծառաթփատեսակներ:

Մարզը աչքի է ընկնում հարուստ կենսաբազմազանությամբ, բուսական և կենդանական աշխարհի արժեքավոր տեսակներով, որոնք ունեն պահպանման կարիք: Տարածաշրջանի ֆլորայի կազմում ընդգրկված են շուրջ 20 էնդեմիկ, 40 հազվագյուտ և անհետացող տեսակներ:

Կենդանական աշխարհը նույնպես հարուստ է և բազմազան: Երկկենցաղներից հանդիպում է ծառագորտը, սողուններից հանդիպում են իլիկածը, աղնձօծը, սովորական լորտուն: Անտառային գոտու թռչնաշխարհը հիմնականում ներկայացված է ճնճողկանմաններ կարգի շուրջ 40 տեսակներով: Կաթնասուն կենդանիներից հանդիպում են անտառային մուկը, քնամուկը, խոշոր կաթնասուններից գայլը, գորշ արջը, վարազը և այլ /քարտեզ՝ Կենդանիների տեղաբաշխում/:

Կոտայքի մարզի հողաին ծածկույթը հիմնականում ներկայացված է անտառային, մարգագետնատափաստանային, շագանակագույն և մարգագետնատափաստանային քարքարոտ տիպերով: Հումուսի պարունակությունը հողերում տատանվում է 3-5% սահմաններում, քարքարոտությունը՝ շուրջ 30%:

Մարզի հողային ծածկույթի էրոզիայի առավելագույն ցուցանիշները դիտարկվում են կենտրոնական /70% և ավելին/ և հարավային հատվածներում՝ 46-70%-ի սահմաններում (Քարտեզ՝ Հողային ծածկույթ և էրոզիաներ): Էրոզիայի և անապատացման պրոցեսները կանխարգելելու և մեղմացնելու նպատակով առաջարկվում է կիրառել ոռոգման առաջատար մեթոդները, ինչպես նաև անտառաշերտի հիմնում:

Մարզի առանձին հատվածներում էրոզիան տատանվում է 26-45%-ի սահմաններում: Օգտակար հանածոներից մարզում առկա են պղինձ, պղնձամոլիբդեն, երկաթ, ոսկի, այլումինի հումք (նեֆելինային սիենիտներ), կերակրող, օբսիդիան, կրաքարեր և տրավերտին, մարմար և մարմարացած կոնգլոմերատ, դոլոմիտ, դիատոմիտ, բազալտներ, անդեզիտաբազալտներ, անդեզիտներ, պեմզա, պեռլիտի, հրաբխային խարամների (քարտեզ՝ Հումքային ռեսուրսներ):

3. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի բոլոր բնակավայրերը, գրեթե առանց բացառության, հարուստ են պատմամշակութային, հնագիտական և բնական հուշարձաններով, որոնք խթան են հանդիսանում այդ մարզում զբոսաշրջության կազմակերպման լավագույն բարենպաստ պայմանների ստեղծման համար:

Համաձայն ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգի, հանրապետության տարածքում գտնվող հուշարձաններն ըստ արժևորման չափանիշների դասակարգվում են հանրապետական և տեղական նշանակության, որտեղ.

- հանրապետական նշանակության կարգին են դասվում ժողովրդի պատմության, նրա նյութական ու հոգևոր մշակույթի իմացության համար պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային բացառիկ այլ արժեք ներկայացնող հուշարձաններ (օրինակ՝ Եկեղեցի Սբ Կաթողիկե /Եղվարդի եռանակ բազիլիկը/- 6-րդ դար):
- տեղական նշանակության կարգին են դասվում հանրապետության որևէ տարածաշրջանի պատմությունն ու մշակույթը, տեղական առանձնահատկությունները բնութագրող պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային հուշարձանները (օրինակ՝ խաչքար Մեծ Եղեռնի գոհերի հիշատակին 1990 թ.):

Կոտայքի մարզի տարածքի պատմամշակութային հուշարձանների թվին են դասվում.

- հնագիտական քարեդարյան կայաններ, ժայռապատկերներ, քարայր կացարաններ, մեգալիթյան կոթողներ, վիմագրական հուշարձաններ, հնագույն և միջնադարյան բնակատեղիներ, ամրոցներ, դամբարանադաշտեր, պաշտամունքային և քաղաքացիական կառույցներ, կամուրջներ և այլն,
- պատմության և մշակութային նշանավոր իրադարձությունների և նշանավոր գործիչների հետ առնչվող կառույցներ, կոթողներ, հուշահամալիրներ, գերեզմաններ:
- քաղաքաշինական և ճարտարապետական՝ պատմական բնակավայրեր, թաղամասեր, փողոցներ, բնակելի, պալատական, պաշտամունքային հասարակական, արտադրական կառույցներ, ժողովրդական տներ, ճարտարապետական կոթողներ:

ՀՀ բոլոր մարզերի անշարժ հուշարձանների համար կատարվել է հաշվառում և կազմվել են համապատասխան պետական ցուցակներ, որոնք հաստատվել են ՀՀ կառավարության կողմից:

Համաձայն ՀՀ կառավարության 24 դեկտեմբերի 2003 թ. N 1793 որոշման Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի տարածքում տեղակայված հուշարձաններից ամենաարժեքավորներն են Եղվարդ քաղաքի վարչական կազմի մեջ մտնող «Սեղանասար» բնակատեղին և Սբ Կաթողիկե եկեղեցին:

1	2	3	4	5	6	7	8	9
1				ԲՆԱԿԱՏԵՂԻ	3-15-րդ դդ.	քաղաքից 3կմ հս-աե	<	
2				ԲՆԱԿԱՏԵՂԻ «ՍԵՂԱՆԱՍԱՐ»	թ.ա. 20-18 դդ.	քաղաքից հվ-աե	<	
	2.1			Դամբարանադաշտ	թ.ա. 2 հազ. 1 կես	Սեղանասար բլրի ստորոտում	<	
3				ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	19-20-րդ դդ.	եռանակ եկեղեցուց հս	<	
4				ԵԿԵՂԵՑԻ	4-րդ դ.	գործող գերեզմանոցի հվ մասում, բլրի գագաթին	<	
	4.1			Գերեզմանոց	5-17-րդ դդ.	գործող գերեզմանոցի աե և հվ մասերում	<	
		4.1.1		հաչքար	11-12-րդ դդ.	գերեզմանոցի կենտրոնական մասում	<	
		4.1.2		հաչքար, կազմող վարդան	12-րդ դ.	գերեզմանոցի կենտրոնական մասում	<	
		4.1.3		հաչքար	12-րդ դ.	գերեզմանոցի կենտրոնական մասում	<	որմնափակ 3 խաչքարերից կենտրոնականը
		4.1.4		հաչքար	12-րդ դ.	գերեզմանոցի կենտրոնական մասում	<	որմնափակ 3 խաչքարերից

		4.1.5	հաչքար	12-րդ դ.	գերեզմանոցի հվ-ամ մասում	Հ	աշխարհագրական, Երկաստիճան, պատվանդանի վրա
		4.1.6	հաչքար	12-րդ դ.	Նախորդից հվ	Հ	Երկաստիճան, պատվանդանի վրա
		4.1.7	հաչքար	12-րդ դ.		Հ	ստորին հատվածը, պատվանդանի վրա
		4.1.8	հաչքար	12-րդ դ.	որմնափակ հաչքարերից հս-աե	Հ	
		4.1.9	հաչքար	12-րդ դ.	որմնափակ հաչքարերից	Հ	Երկաստիճան պատվանդանին
					հս		կանգնեցված 4 խաչքարերից աջակողմյանը
		4.1.10	հաչքար	12-րդ դ.	Նախորդի մոտ	Հ	Երկաստիճան պատվանդանին կանգնեցված 4 խաչքարերից աջից երկրորդը
		4.1.11	հաչքար	12-րդ դ.	Նախորդի մոտ	Հ	Երկաստիճան պատվանդանին կանգնեցված 4 խաչքարերից ձախից երկրորդը
		4.1.12	հաչքար	12-րդ դ.	Նախորդի մոտ	Հ	Երկաստիճան պատվանդանին կանգնեցված 4 խաչքարերից ձախակողմյանը
		4.1.13	հաչքար	12-րդ դ.	գերեզմանոցի կենտրոնական մասում, Երկաստիճան պատվանդանին կանգնած 4 խաչքարերից 15մ հս	Հ	
		4.1.14	հաչքար	12-րդ դ.	Նախորդից 20մ ամ	Հ	Երկաստիճան պատվանդանի վրա, վերնամասը կտրտված
		4.1.15	հաչքար	12-րդ դ.	Նախորդից 10մ ամ	Հ	
		4.1.16	հաչքար	12-րդ դ.	Նախորդից հս	Հ	
		4.1.17	հաչքար	12-րդ դ.	Նախորդից հվ	Հ	
		4.1.18	հաչքար	12-րդ դ.	գերեզմանոցի կենտրոնական մասում	Հ	
		4.1.19	հաչքար	12-րդ դ.	Նախորդից 4-5մ հվ	Հ	
		4.1.20	հաչքար	12-րդ դ.	Նախորդից 2մ ամ	Հ	
		4.1.21	հաչքար	12-13-րդ դդ.		Հ	
		4.1.22	հաչքար	12-13-րդ դդ.	ճանապարհի եզրին	Հ	
		4.1.23	հաչքար	12-13-րդ դդ.	Նախորդի մոտ	Հ	
		4.1.24	հաչքար	12-13-րդ դդ.	գերեզմանոցի հս-աե մասում	Հ	
		4.1.25	հաչքար	13-րդ դ.	գերեզմանոցի հվ մասում	Հ	
		4.1.26	հաչքար	13-րդ դ.	գերեզմանոցի կենտրոնական մասում	Հ	
		4.1.27	հաչքար	13-րդ դ.	գերեզմանոցի կենտրոնական մասում	Հ	
		4.1.28	հաչքար	13-րդ դ.	գերեզմանոցի կենտրոնական մասում	Հ	
		4.1.29	կոթող	5-6-րդ դդ.	Եկեղեցու մոտ	Հ	պահպանվել է խոյակը և հավասարաթև խաչի պատկերով վերնամասը
		4.1.30	Տապանաքար Կարապետի և այլոց	1560 թ.	գերեզմանոցի կենտրոնական մասում	Հ	արձանագիր
5			ԵԿԵՂԵՑԻ	5-6-րդ դդ.	Տերյան փող. N4 տան բակում	Հ	միանավ սրահ
6			ԵԿԵՂԵՑԻ	5-րդ դ. վերակառ. 6-7-րդ դդ.	Տերյան փող. N1 տան բակում	Հ	եռանավ բազիլիկ սրահ
	6.1		հաչքար	16-17-րդ դդ.	Եկեղեցու մեջ	Հ	կտրտված

	6.1		Տապանաքար		Եկեղեցուց 5մ հվ-ան	<
7			ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ	1301 թ.	քաղաքի կենտրոնական մասում	<
	7.1		հաչքար	13 դ.	Եկեղեցուց 15մ հվ-ամ	<
	7.2		հաչքար	13 դ.	Եկեղեցուց 15մ հվ-ան	<
	7.3		հաչքար	13 դ.	Եկեղեցուց 15մ հվ-ամ	<
	7.4		հաչքար	1558 թ.	Եկեղեցուց հս-ան	<
	7.5		հաչքար, կազմող՝ թիրամ	1591 թ.	Եկեղեցուց հս-ան	<
	7.6		հաչքար	16-17-րդ դդ.	Եկեղեցուց հվ-ամ	<
	7.7		հաչքար	16-17-րդ դդ.	Եկեղեցուց հվ պատի տակ	<
	7.8		հաչքար Մեծ Եղեռնի զոհերին	1999 թ.	Եկեղեցու տարածքում	<
8			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱԾԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՂՎԱԾՆԵՐԻՆ	1975 թ.	քաղաքի կենտրոնական մասում	S
9			ԿՈԹՈՂ	5-6-րդ դդ.		<
10			ՄԱՏՈՒԻ ՍԲ. ՍԱՐԳԻՍ	վերակառ. 20 դ.	զոհվածների հուշարձանի դիմաց, այգիների մեջ	<
						պահպանվել են Հիին Եկեղեցու հիմքերը

4. ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախագծի հիմնական նպատակն է համայնքի հեռանկարային զարգացման, տարածքային աճի ուղղությունների, տարածքների ֆունկցիոնալ նշանակության որոշումը՝ տրանսպորտային, ինժեներական, տեխնիկական ենթակառուցվածքների սկզբունքային լուծումներով, բնապահպանական լայն համալիրի կիրառումով, տարածքների հեռանկարային օգտագործման և կառուցապատման պարտադիր պահանջների սահմանումով:

Քաղաքի նոր հատակագծային կառուցվածքը և ընդհանուր տարածական հորինվածքը կապում են Եղվարդում նոր արհեստական ջրամբարի ստեղծման հետ: Այս հանգամանքը թույլ է տալիս նոր մակարդակի վրա կազմակերպել տարածքի ռեկրեացիոն համակարգը, մյուս կողմից, թելադրելով քաղաքային հատակագծային և հորինվածքային առանցքների ուղղվածությունը:

Արդի փուլի վերափոխումները լայն հնարավորություններ են ընձեռում համայնքի բնական (առողջարանային, ռեկրեացիոն, գյուղատնտեսական) հարուստ ռեսուրսների օգտագործման և տնտեսության «բազային» ճյուղերի, տարածաշրջանի գյուղատնտեսական, ագրոարդյունաբերական արտադրության զարգացման, փոքր և միջին բիզնեսի խթանման և աջակցման համար: Ինչպես ամենուրեք Հայաստանում, շարունակվում է արտադրական տարածքների սեփականաշնորհման և վերապրոֆիլավորման գործընթացը: Այսօր, դեռևս բացակայում է տնտեսական առաջընթացի միասնական հեռանկարային ծրագրավորումը և առանձին ձեռնարկությունների բիզնես պլանավորումը: Այդ պատճառով հեռանկարային բնակչության որոշումը՝ ընդունված ավանդական մեթոդների (աշխատանքային հաշվեկշռի, նպատակային կանխատեսումների և այլ մեթոդներ) կիրառմամբ այս փուլում դեռ հնարավոր չէ: Հետևապես, ներկայումս քաղաքի բնակչության հեռանկարային աճը որոշելու համար առաջնային են դառնում տարածքային զարգացման հնարավորությունը և ժողովրդագրական տարողունակության որոշումը:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, համայնքի հեռանկարային առավելագույն բնակչության թիվը ընդունվել է 20 հազար մարդ, որը սահմանվել է «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծով»՝ նկատի ունենալով տարածքի դեմոգրաֆիական լրիվ տարողունակության պայմանը: Միևնույն ժամանակ, քաղաքի բնակչության առավելագույն քանակի ապահովման համար ժամկետների նախատեսումը կախված է հանրապետության ընդհանուր զարգացման տեմպերից, քաղաքական իրավիճակից, բնակչությանը աշխատատեղերով ապահովելու մակարդակից:

Հատակագծային կառուցվածքը և գործառական գոտևորումը մշակվել են բնօգտագործման, շրջակա միջավայրի պահպանման, ինժեներական նախապատրաստման միջոցառումների իրականացման փոխկապակցված խնդիրների համընդհանուր լուծումներով՝ համայնքի տարածքի նպատակաուղղված քաղաքաշինական կազմակերպմամբ: Վերլուծության և համալիր գնահատականի արդյունքում ընտրվել են կառուցապատման ենթակա տարածքները և որոշվել են այդ տարածքների կառուցապատման համար բարենպաստության ստիճանը, տրվել են պահանջվող ինժեներական նախապատրաստման միջոցառումները և դրանց իրականացման ուղիները:

Բնակելի թաղամասերը զարգանում են արևելյան մասերում, իսկ համաքաղաքային կենտրոնը՝ զարգացած զբոսայգով և նոր սպորտային համալիրով կազմակերպվում է նոր լճի ափերի մոտ: Լճի ամբողջ պարագծով տեղադրվում են տարբեր տիպի հանգստի, առողջարանային և զվարճանքի համալիրները՝ համապատասխան կանաչապատումով և անտառապատումով:

Ճանապարհների, գերեզմանների, Էներգետիկայի և այլ կոմունալ օբյեկտների այն պաշտպանիչ գոտիների տարածքները, որոնք այսօր արդեն զբաղված են բնակելի և հասարակական կառույցներով վերափոխվում են բուֆերային գոտիների, որտեղ մինչև հաշվարկային ժամկետի ավարտը, պետք է արգելվեն բոլոր նոր բնակելի և հասարակական կառուցապատման և վերանորոգման աշխատանքները:

Մշակվել են Եղվարդի քաղաքաշինական զարգացման հիմնական ուղղությունները և առանձնացվել են քաղաքաշինական օգտագործման ռեժիմները: Նախագծով առավելագույնս կանոնակարգվել է քաղաքի հատակագծային կառուցվածքը՝ թաղամասերի հասարակական օբյեկտների հավասարակշռված բաշխումով և փողոցային ցանցի ձևավորմամբ, հասարակական կանաչի ապահովմամբ, ներքին տարածքների համապատասխան գործառական նշանակության սահմանմամբ: Հաշվի առնելով տարածքի գերակշռող գործառական օգտագործումը, կառուցապատման կանոնակարգման անհրաժեշտությունը, քաղաքի տարածքում առաջարկված են հետևյալ կառուցվածքահատակագծային սկզբունքները.

- փողոցային ցանցի կատարելագործում,
- տարածքում հասարակական սպասարկման գործառույթների կանոնակարգում, սպասարկման

օբյեկտների համալիր ձևավորում՝ սպասարկման մատչելիության գոտիներում ընդգրկելով բնակելի թաղամասերը,

- անտառապուրակային և ռեկրեացիոն գոտիների ձևավորում,

Քաղաքի տարածքի ճարտարապետահատակագծային կազմակերպման հիմքում դրվել են հետևյալ հիմնական սկզբունքները.

- կառուցապատման խտությունների կանոնակարգում,
- ներքին ռեզերվային տարածքների քաղաքի միասնական հատակագծային կառուցվածքում ընդգրկում, հին և նոր թաղամասերի օրգանական հատակագծային կապերի ստեղծում,
- սանիտարական գոտիների պահանջների պահպանում և կանաչ գոտիների ընդլայնում,
- սեյսմիկ վտանգի, սողանքների պայմաններում քաղաքի կառուցվածքային հատակագծային տարրերի հուսալիության և կայունության ապահովում:

ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ցուցանիշը	Չափի միավորը	Ներկա	Ըստ գլխ. հատակ
1. Տարածքը			
Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ ընդամենը	հա	6722.0	6722.0
այդ թվում՝			
բնակավայրերի փաստացի սահմաններում ընդգրկված հողեր	հա/տոկոս (ընդհանուր տարածքից)	675.4	776.13
բնակավայրերի հողեր	հա/տոկոս	457.53	618.33
որից՝			
բնակելի կառուցապատման	-/-	427.9	560.9
հասարակական կառուցապատման	-/-	29.54	56.74
խառը կառուցապատման	-/-	0.09	10.29
ընդհանուր օգտագործման, որից՝	հա/տոկոս	214.3	157.8
ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ փողոցներ, հրապարակներ	-/-	0.4	76.5
բուֆերային	-/-	82.4	84.4
անօգտագործելի	-/-		
այլ հողեր	-/-	27.26	-
արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	հա/տոկոս	107.81	-
որից՝			
արդյունաբերական օբյեկտների	-/-	91.55	80.55
գյուղատնտեսական արտադրական օբյեկտների պահեստարանների	-/-	68.87	68.87
ընդերքի օգտագործման	-/-	17.1	17.1
Ըներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ ենթակառուցվածքների հողեր	հա/տոկոս	26.12	26.12
որից՝			
Ըներգետիկայի	-/-	55.91	55.91
կապի	-/-	1.09	1.09
տրանսպորտի	-/-	0.21	0.21
կոմունալ ենթակառուցվածքների	-/-	49.52	49.52
հատուկ պահպանվող տարածքների հողեր	հա/տոկոս	5.09	5.09
որից՝			
գերեզմանոցներ	-/-	16	16.8
բնապահպանական	-/-	-	-
առողջարարական նպատակներով նախատեսված	-/-	-	-
հանգստի համար նախատեսված	-/-	-	141
պատմական և մշակութային	-/-	0.47	0.47
հատուկ նշանակության հողեր	-/-	85.15	85.15
գյուղատնտեսական նշանակության հողեր	հա/տոկոս	5647.6	4616.96
որից՝			
վարելահող	-/-	3871.24	2954.53
բազմամյա տնկարկներ	-/-	96.98	96.98
խոտհարքներ	-/-	-	-
արոտավայրեր	-/-	352.75	352.75
այլ հողատեսքեր	-/-	1333.95	1200
անտառային հողեր	հա/տոկոս		
ջրային հողեր	-/-	37.66	837.66
պահուստային հողեր	-/-	-	-
այլ հողեր (թփուտներ)	-/-	-	-
2. Տարածքն ըստ սեփականության ձևերի			
Պետական սեփականություն	հա/տոկոս		156.29
համայնքի սեփականություն	հա/տոկոս		4120.62
ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականություն	հա/տոկոս		2445.01

2. Դեմոգրաֆիական տվյալներ Բնակչության թիվը	(հազ. մարդ)	12.100	20.000
բնակչության խտությունը	(հազ. մարդ/հա)	0.0021	0.0029
բնակչության տարիքային կազմը, այդ թվում՝			
մինչև 15 տարեկան երեխաներ	(հազ. մարդ/տոկոս)	3100	
աշխատունակ հասակի բնակչություն		2111	
թոշակառու բնակչություն		1717	
4. Բնակելի ֆոնդը			
Ընդհանուր բնակելի ֆոնդը	(հազ. քմ. ընդ. մակ.)	208.600	1701.5
որից՝			
բազմաբնակարան տներ	(բն. մակ./%) (ընդ. բնակ. մակերեսից)		
մենատներ			
բնակելի ֆոնդն ըստ հարկայնության			
1-2-հարկանի			
3-4-հարկանի	շենք		
5 հարկ և ավելի շենք	շենք		
բնակչության միջին ապահովվածությունը բնակելի ընդհանուր մակերեսով (քմ/մարդ)			
Առկա բնակելի ֆոնդի նվազումը			
Այդ թվում՝			
ըստ տեխնիկական վիճակի			
ըստ վերակառուցման			
ըստ այլ պատճառների (սանիտարապաշտպանիչ գոտիների կազմակերպում, վերակառուցում և այլն)			
5. Բնակչության մշակութային և կենցաղային սպասարկման համակարգը			
Մանկական նախադպրոցական կազմակերպություններ	(տեղ)	3/320	
ընդամենը / 1000 մարդ		2	
հանրակրթական դպրոցներ	(տեղ)	3/1945	
ընդամենը / 1000 մարդ			
հիվանդանոցներ	(մահճակալ)	1/120	
ընդամենը / 1000 մարդ			
պոլիկլինիկաներ	(հերթում հաճախում)	1/168	
ընդամենը / 1000 մարդ			
առևտրի	(քմ առևտրի մակ.)	2500	
ընդամենը / 1000 մարդ			
կենցաղային սպասարկման	(աշխ. տեղ)		
ընդամենը / 1000 մարդ			
առողջարանային հանգստի հիմնարկներ	(տեղ)		
ընդամենը / 1000 մարդ			
այդ թվում՝			
հանգստյան տներ, պանսիոնատներ և այլն (առողջարանային քաղաքների համար՝ հյուրանոցները ներառյալ)	տեղ		
երեխաների համար ճամբարներ	տեղ		
6. Տրանսպորտային սպասարկում			
Ուղևորատար հասարակական տրանսպորտի գծերի երկարությունը ընդամենը	կմ		
այդ թվում՝			
Էլեկտրաֆիկացված երկաթուղի	(կրկնակի ուղեգիծ / կմ)	-	-
մետրոպոլիտեն		-	-
տրամվայ		-	-
տրոլեյբուս		-	-
ավտոբուս	կմ	-	2x16.5=33
ճոպանուղի	հատ	-	-
Մայրուղային ճանապարհների և փողոցների երկարությունը՝	կմ	7.83	13.63
ընդամենը			
այդ թվում՝			
արագընթաց շարժման մայրուղային ճանապարհների	կմ	-	-
չընդհատվող շարժման համաքաղաքային նշանակության մայրուղիների	կմ	-	-
Արտաքին տրանսպորտ		-	-
այդ թվում՝			
Էլեկտրիֆիկացված երկաթուղի (միակի ուղու կմ)	կմ	180	180
ավտոբուս (ուղու կմ)	կմ	115	145
օդային տրանսպորտ (ուղու կմ)		-	1
կամուրջներ, ուղեկամուրջներ, տրանսպորտային հանգույցներ (ուղու կմ)		2	2
Փողոցաճանապարհային խտություն (կմ / քառ. կմ)	կմ/քառ.կմ		

քաղաքային (գյուղական) կառուցապատման սահմաններում (կմ/քառ. կմ)	կմ/քառ.կմ	1.16	3.22
7. Ինժեներական սարքավորումներ և բարեկարգում			
Ընդհանուր ջրօգտագործում (հազ. խմ / օր)	հազ. խմ / օր	8772.5	8171.0
- տնտեսական - խմելու նպատակով	-/--/-	8482.5	7371.0
- արտադրական կարիքների համար	-/--/-	290.0	800.0
Ջրամատակարարման համակարգի գլխամասային կառույցների հզորությունը	վ/րկ	82.0	82.0
Ջրամատակարարման օգտագործման աղբյուրներ			
Մաքուր ջրօգտագործում (լ / օր)	վ/րկ	200	200
այդ թվում՝			
տնտեսական-խմելու նպատակով (լ/օր)	վ/րկ	200	200
կոյուղի (հազ խմ/օր)	հազ. խմ / օր	3158.0	5148.0
կեղտաջրերի ընդհանուր ելքը՝ ընդամենը	հազ. խմ / օր		
այդ թվում՝			
կենցաղային կոյուղի	հազ. խմ / օր	2868.0	4348.0
արտադրական կոյուղի			
կոյուղու մաքրման կայանների արտադրողականություն	հազ. խմ / օր	290.0	800.0
Էլեկտրամատակարարում			
Էլեկտրաէներգիայի գումարային օգտագործում (կՎտ. ժամ/տարի)	մլն կՎտ. ժամ/տարի	15.2	25.1
այդ թվում՝			
արտադրական օբյեկտների կարիքների համար	-/--/-	1.4	4.2
կոմունալ-կենցաղային կարիքների համար	-/--/-	13.8	20.9
1 մարդու կողմից տարեկան էլեկտրաէներգիայի օգտագործում (կՎտ. ժամ)	կվտ/ժամ	950.0	950.0
այդ թվում՝			
կոմունալ-կենցաղային կարիքների համար			
Էլեկտրաբեռնվածության ծածկման աղբյուրներ (մլն կՎտ)			
այդ թվում՝			
Ջերմամատակարարում			
Բնակավայրի վառելիքային հաշվեկշռում գազի տեսակարար կշիռը (տոկոս)	%		
գազի օգտագործումը՝ ընդամենը (մլն խմ)	մլն. խմ/տարի	43.8	52.2
այդ թվում՝			
կոմունալ-կենցաղային կարիքների համար (մլն խմ)	մլն. խմ/տարի	43.7	51.9
արտադրական կարիքների համար		0.1	0.3
մակերևութային ջրերի հեռացման ցանց	կմ	40.0	40.0
Փողոցային ցանցի ընդհանուր երկարություն	կմ		
8. Տարածքի ինժեներական նախապատրաստում			
Տարածքի պաշտպանությունը ջրածածկումից			
մակերեսը	հա		
պաշտպանիչ կառույցների երկարությունը	կմ		
Գետափերի ամրացում	կմ		
Տարածքի սահմաններում ստորգետնյա ջրերի մակարդակի իջեցում և այլ միջոցառումներ	հա		
Տարածքի սանիտարական մաքրում	հա		
Կենցաղային աղբի ծավալը (հազ. խոր. մ)		14.0	24.0
Աղբի այրման և աղբավերամշակման կազմակերպություններ (միավ./հազ. խմ օրում)			
9. Շրջակա միջավայրի պաշտպանություն			
Աղտոտվածության աղբյուրներից, աղմուկի ներգործությունից պաշտպանող սանիտարապաշտպանիչ գոտիներ ընդամենը	հա		
այդ թվում՝			
կանաչապատում	հա		
Մթնոլորտի օդի աղտոտվածության մակարդակը (% սահմ. թույլատր. խտ.-ից (ՍԹԽ))		0.04-1	0.04-1
Ջրամբարների աղտոտվածության մակարդակը			
Աղմուկի ազդեցության մակարդակը (դեցիբել (ԴՑԲ))		61.66	55-60

5. ՏՐԱՆՍՊՈՐՏ

5.1. ԱՐՏԱՔԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՊԵՐ

Եղվարդն ընկած է Երևանի հյուսիսում, 20կմ հեռավորությամբ, Արայի լեռան ստորոտում, ծովի մակարդակից 1350մ բարձրությամբ: Եղվարդը տրանսպորտային ուղիներից դուրս է մնացել այն պատճառով, որ գտնվում է Զասաղ և Հրազդան գետերի միջակայքում, որտեղով որ անցնում են հիմնական մայրուղիները: Եղվարդով է անցնում <-6 հանրապետական նշանակության Աբովյան-Եղվարդ-Վշտարակ II կարգի ճանապարհը:

1980-ական թվականների վերջին կառուցվեց Եղվարդի հարավային շրջանային ճանապարհը, և այժմ <-6-ը քաղաքից դուրս է բերված: Մայրաքաղաքից դեպի Եղվարդ, և այնուհետև դեպի Հարթավան (Սպարանի շրջան) է գնում մեկ այլ <-4 հանրապետական ճանապարհը, որը IV կարգի է:

Մտակա երկաթուղին Մասիս-Նուռնուս է, այն անցնում է քաղաքից 4կմ դեպի հարավ՝ արևելք-արևմուտք ուղղությամբ:

5.2. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՈՐԻԵՆՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿՎՐԵՐ

Համաձայն «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի», հյուսիս-հարավ մայրուղին անցնելու է Քուչակ-Երևաթափ-Արագյուղ-Աբովյան ուղղությամբ, շրջանցելով Արայի լեռը արևելյան կողմից: Ծրագրի շրջանում է Եղվարդից 5կմ հեռավորությամբ, և այդ ճանապարհի կառուցումից հետո Եղվարդն ավելի մոտ կգտնվի մայրուղային ճանապարհային ցանցին: Այդ նույն նախագծով նախատեսվում է կառուցել նաև Երևան քաղաքի արևմտյան շրջանցիկ ճանապարհը, որը կանցնի Եղվարդից հարավ 7կմ հեռավորությամբ: Այդ ուղին ևս կնպաստի քաղաքի տրանսպորտային մատչելիության բարձրացմանը:

Մասիս-Նուռնուս երկաթուղին, որը կառուցվեց 80-ական թվականներին, ունի ցածր տեխնիկական ցուցանիշներ, մասնավորապես երկայնական թեքությունները Հաղթանակ գյուղից մինչև Պռոշյան շատ մեծ են և գիծն էլ ոլորապտույտ է, որի հետևանքով գնացքների արագությունը շատ ցածր է:

«ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծով» նախատեսված է Եղվարդի հարթավայրում կառուցել միջազգային չափանիշներին համապատասխան մի օդանավակայան, որը կարող է սպասարկել հարավ-կովկասյան բոլոր ուղևորա- և բեռնափոխադրումները դեպի հեռավոր արտերկրներ: Այդպիսի օդանավակայաններ (թերմինալներ) արդեն ձևավորվում են Եվրոպական մի քանի երկրներում, ինչպես օրինակ Հոլանդիայում (Սքիպոլ), Աթենքում (Օլիմպիական) և այլն: Այսպիսի մի օդանավակայան ունենալը երկրին մեծ օգուտներ կբերի և կբացի բազմաթիվ աշխատատեղեր:

5.3. ՆԵՐՔԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

Եղվարդն ընկած է Արա լեռան հարավային հարթավայրում և փողոցային ցանցն ունի ավանդական խուճուճ տեսք, ինչը բնորոշ է հին հայկական բնակավայրերին: Միայն խորհրդային վերջին տարիներին քաղաքի հյուսիսարևելյան շրջանում բաժանված տնամերձ հողակտորների փողոցային ցանցերն անիմաստ ուղղանկյունաձև են, առանց որևէ հենքի:

Քաղաքի գլխավոր փողոց է հանդիսանում Նախկին Հ-6 հանրապետական նշանակության Աբովյան-Եղվարդ-Աշտարակ ճանապարհը, որն անցնում է բնակավայրի ամբողջ երկարությամբ: Այժմ այդ ուղին անցնում է շրջանցիկ ճանապարհով, որը ծրագրված է քաղաքի հարավային մասով և Հ-4 Երևան-Եղվարդ-Հարթավան ճանապարհի հետ փոխհատման տեղում կատարված է «Երեքնուկի տերև» տեսքի տրանսպորտային հանգույց:

2006 թ. աշնանը կատարված տրանսպորտային միջոցների անցուդարձի հաշվառման արդյունքները բերված են ստորև աղյուսակում:

NN	Փողոցի անվանումը	Երկարությունը, մ	Երթևեկային մասի լայնությունը	Մայրերի լայնությունը, մ	Տրանսպորտի ժամային անցուդարձը և փողոցի բեռնվածության մակարդակը (Z)			
					2006 թ. 6	Z 7	2006 թ. 8	Z 9
1	2	3	4	5				
1	<i>Սաֆարյան</i>							
	I հատված	960	7.5-8.5	1.0-1.5	90	0.09	212	0.21
	II հատված	670	7.5-8.5	1.0-1.5	190	0.19	448	0.45
	III հատված	430	7.5-8.5	1.0-1.5	120	0.12	283	0.28
2	<i>Չարենցի</i>							
	I հատված	750	7.5-8.5	1.5	216	0.22	509	0.51
	II հատված	650	7.5-8.5	1.5	160	0.16	377	0.38
	III հատված	450	9.0	2.5	82	0.08	193	0.19
3	<i>Կոմիտասի</i>	900	9.0	2-2.5	68	0.07	160	0.16
	I հատված	1250	2X7.5	1.5-2.0	220	0.11	519	0.52
	II հատված	300	8.0	1.5-2.0	180	0.18	424	0.42
	I հատված	350	7.5	1.0-1.5	55	0.06	130	0.13
	II հատված	820	7.5	1.0-1.5	41	0.04	97	0.10
	-	300	7.5	1.0	33	0.03	79	0.08
	<i>Ընդամենը`</i>	<i>7830</i>						

Ինչպես երևում է աղյուսակից, քաղաքի փողոցները տրանսպորտի երթևեկությամբ ծանրաբեռնված չեն և դեռևս աշխատում են ազատ ռեժիմով: Եթե համարենք, որ հանրապետության տնտեսության զարգացման այսօրվա տեմպը նույնը կմնա առաջիկա 10 տարիների ընթացքում, ապա դրան համապատասխան երթևեկության տարեկան աճը կկազմի մոտ 10%: Հետևաբար, 10 տարի անց, 2016 թվականին, Եղվարդի փողոցների սպասվող անցուդարձերը կկազմեն աղյուսակի վերջին երկու սյունակներում բերված տվյալներին համապատասխան մեծություններ: Աղյուսակի ամենավերջին սյունակում բերված են փողոցների բեռնվածության մակարդակները: Համաձայն այդ տվյալների, Եղվարդ քաղաքի փողոցային ցանցը դեռևս կաշխատի նորմալ բեռնվածությամբ և խցանումների վտանգ չի սպառնում:

Համաքաղաքային նշանակության փողոցների ընդհանուր երկարությունը կազմում է 7.83 կմ: Բնակելի տարածության 1կմ²-ի հաշվով այդ փողոցների խտությունը կազմում է 1.16 կմ/կմ²: Հեռանկարում, համաքաղաքային նշանակության փողոցների գումարային երկարությունը կկազմի 25.04 կմ, իսկ տեսակարար խտությունը 3.22 կմ/կմ²:

- Եղվարդ համայնքի սահմաններում տրանսպորտային միջոցների տարեկան արտանետումները կազմում են.
 - Ածխածնի մոնօքսիդ (CO) - 251.2 տ/տարեկան
 - Ազոտի օքսիդներ (NOx) - 10.1 տ/տարեկան
 - Ածխաջրածիններ (CmHn) - 25.6 տ/տարեկան
 - Կոշտ կյուբեր - 0.25 տ/տարեկան

6. ԾՐԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԸՂԱՆՈՒՅՈՒՆ

Եղվարդ քաղաքային համայնքի շրջակա միջավայրի վրա տեխնածին ազդեցության հիմնական գործոններն

են.

- մթնոլորտային օդի աղտոտումը արդյունաբերական ձեռնարկությունների, կոմունալ-կենցաղային սեկտորի և ավտոտրանսպորտի արտանետումներով
- շրջակա միջավայրի աղտոտումը կոշտ կենցաղային թափոններով
- տրանսպորտի աղմուկը:

Եղվարդ քաղաքային համայնքում մակերևութային ջրերը բացակայում են: Մտակա Հրազդան և Քասախ գետերը հոսում են համայնքի սահմաններից դուրս և չեն աղտոտվում համայնքի կեղտաջրերով: Կեղտաջրերը կոլեկտորով ուղղվում են Չարենցավան-Երևան կոլեկտոր:

Հաշվարկային ժամկետի ընթացքում /մինչև 2020 թ./ համայնքի տարածքում կավարտվի եղվարդի ջրամբարի կառուցումը/ Նախագիծը մշակված է «Հայջրնախագիծ» ՓԲԸ-ի կողմից:

Ջրամբարի հայելու մակերեսը կազմում է 825 հա, ծավալը՝ 90 մլն խոր.մ: Ջրամբարը լցվելու է Արզնի-Շամիրամ ջրանցքի ջրերով չվոռոգվող շրջանում:

Ջրամբարը թույլ կտա 72 մլն խոր. մ-ով նվազեցնել Սևանա լճի ջրերի օգտագործումը Կոտայքի մարզի 7500 հա գյուղատնտեսական հողերի ոռոգման նպատակով, ինչպես նաև կնպաստի համայնքի միկրոկլիմայի բարելավմանը և հանգստի գոտու կազմակերպմանը:

Մթնոլորտային օդը. Ներկայումս Եղվարդ քաղաքային համայնքի մթնոլորտային օդն աղտոտվում է արդյունաբերական ձեռնարկությունների, կոմունալ-կենցաղային օբյեկտների և ավտոտրանսպորտի արտանետումներով:

Համայնքում գործող արդյունաբերական ձեռնարկությունների /«Առնակ Սանի» ՍՊԸ, «Էլիտա» ՍՊԸ, «Եղվարդի գինու գործարան» ՓԲԸ/ մթնոլորտ ընդհանուր արտանետումները կազմում են 9.6 տ/տարի, որոնց դեպքում, ինչպես պարզվել է սահմանային թույլատրելի արտանետումների (ՄԹՄ) Նախագծերի վերլուծությունից, մթնոլորտի գետնամերձ շերտի աղտոտվածության մակարդակը աղտոտող բոլոր նյութերով զգալիորեն ցածր է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից (ՄԹԿ):

Մինչև 1991 թ. բազմաբնակարան և հասարակական շենքերի ջերմամատակարարումն իրականացվում էր 1.0 Գկալ/ժ հզորության 1 կաթսայատնից, որը ավելի քան 10 տարի է ինչ չի գործում: Ներկայումս ջեռուցման կարիքների համար հիմնականում օգտագործվում է էլեկտրաէներգիա, բնական գազ և վառելիքայտ: Corinar մեթոդիկայով հաշվարկված կենցաղ-կոմունալ սեկտորի արտանետումները աննշան են և կազմում են 2.3 տ/տարի:

Ավտոտրանսպորտի արտանետումները որոշվել են ըստ Permanent International Association of Road Congresses (PIARC) մեթոդիկայի, որը հաշվի է առնում փողոցների (ճանապարհների) բնութագրերը, տեղանքի բարձրությունը և այլն և տալիս է առավել ճշգրիտ գնահատականներ: Համայնքի սահմաններում ավտոտրանսպորտի արտանետումները կազմում են 286.9 տ/տարի:

Արտանետումների ամփոփիչ ցուցանիշները բերվում են աղ. 6.1-ում:

Աղյուսակ 6.1. ԵՂՎԱՐԴԻ ԶԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԹՆՈԼՈՐՏԸ ԱՐՏՈՏՈՂ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԸ, Տ/ՏԱՐԻ

Աղտոտման աղբյուրները	Ընդամենը	այդ թվում					
		ագոտի օքսիդներ	ածխածնի օքսիդ	ածխաջրածիններ	ծծմբային ասիդրիդ	փոշի	այլ
Անշարժ	19.6	3.9	6.5	0	0	7.0	2.2
Ավտոտրանսպորտ	286.9	10.1	251.2	25.6	0	0	0
Ընդամենը	806.5	14.0	257.7	25.6	0	7.0	2.2

Աղբյուրները՝

1. Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում: Վիճակագրական ժողովածու: ՀՀ վիճակագրական ծառայություն, 2005:

2. Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը: Վիճակագրական ժողովածու: ՀՀ վիճակագրական ծառայություն, 2005:

3. Եղվարդ համայնքի արտադրական ձեռնարկությունների ՄԹՄ նորմատիվները:

Աղյուսակ 6.1-ում բերված տվյալներից երևում է, որ արտանետումների գերակշռող մասը բաժին է ընկնում ավտոտրանսպորտին (93.6%):

Ներկայումս Եղվարդ քաղաքային համայնքում օդի աղտոտվածության հսկողություն չի իրականացվում:

Էկոմոնիտորինգի կենտրոնը ՔԺ 52.04 186-89 համապատասխան քաղաքի օդի աղտոտվածության գնահատման համար առաջարկում է ֆոնային կոնցենտրացիաների հետևյալ արժեքները, մգ/մ³

փոշի - 0.20

ծծմբային ասիդրիդ - 0.02

ագոտի օքսիդներ - 0.008

ածխածնի օքսիդ - 0.1:

Նախկինում կատարված ուսումնասիրությունների^{1/2/} և ձեռնարկությունների ՄԹՄ Նախագծերի վերլուծության տվյալների հիման վրա նաև կարելի է պնդել, որ ներկայումս Եղվարդ համայնքի մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը չի գերազանցում սանիտարահիգիենիկ նորմերը:

Ինչպես արդեն նշվել է, Եղվարդ քաղաքային համայնքի օդի աղտոտվածությունը չի գերազանցում

նորմատիվային մակարդակը: Ընդ որում, մթնոլորտային օդի աղտոտման հիմնական հեռանկարային աղբյուրը կշարունակի մնալ ավտոտրանսպորտը:

Գլխավոր հատակագծով նախատեսված բազմաբնակարան և հասարակական շենքերի կենտրոնացված ջեռուցման վերականգնման դեպքում բնական գազով աշխատող կաթսայատների մթնոլորտ արտանետումները կկազմեն 22.9 տ/տարի, այդ թվում՝ ագոտի օքսիդներ՝ 20.2 տ/տարի, ածխածնի օքսիդ 2.7 տ/տարի:

Չուղադրության մեթոդի կիրառմամբ կարելի է ակնկալել, որ ագոտի օքսիդների և ածխածնի օքսիդի մերձգետնայա առավելագույն կոնցենտրացիաների գումարը 0.15 ՄԹԿ չի գերազանցի:

Չնայած համայնքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը նորմատիվային մակարդակից ցածր է, սակայն նախատեսվում է մթնոլորտային օդի աղտոտվածության հետագա իջեցման հետևյալ միջոցառումները.

- ավտոմոբիլային տրանսպորտի զինումը արտանետվող գազերի չեզոքացուցիչներով
- բնական գազով աշխատող ավտոմեքենաների քանակի ավելացում մինչև 40%
- ճանապարհային ծածկի բարելավում, փողոցների երկարությամբ կանաչ շերտերի ստեղծում
- գլխավոր հատակագծով նախատեսված բազմաբնակարան և հասարակական շենքերի կենտրոնացված ջեռուցման վերականգնում, բաժանորդների լրիվ գազիֆիկացում, ջեռուցման նպատակով վառելիքայտի օգտագործման բացառում

- սանիտարական 5-րդ դասից բարձր վտանգավորության արդյունաբերական ձեռնարկությունների տեղադրման արգելում:

Ավտոտրանսպորտի արտանետումների նվազեցմանը ուղղված նշված միջոցառումները համահունչ են ՀՀ կառավարության 17/07/2006 թիվ 1033-Ն «Տրանսպորտային միջոցների վնասակար նյութերի նվազեցման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» որոշմանը:

Նշված միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա (հաշվի առնելով ավտոպարկի կանխատեսվող 40% աճը) ավտոտրանսպորտի 286.9 տ/տարի արտանետումները կրճատել մինչև 129.1 տ/տարի, այդ թվում ազոտի օքսիդներինը՝ 10.1 տ/տարի մինչև 4.5 տ/տարի, ածխածնի օքսիդինը՝ 251.2 տ/տարի մինչև 113.0 տ/տարի, ածխաջրածիններինը՝ 25.6 տ/տարի մինչև 11.6 տ/տարի: Անշարժ աղբյուրների արտանետումները կկազմեն 19.6 տ/տարի:

Աղմուկը. Եղվարդ համայնքում աղմուկի հիմնական աղբյուրը ավտոմոբիլային տրանսպորտն է: Տրանսպորտային աղմուկի մակարդակը կախված է տրանսպորտային միջոցների կազմից, արագությունից և տեխնիկական վիճակից, երթևեկության ինտենսիվությունից, փողոցների երկայնակի թեքությունից և ճանապարհների ծածկի վիճակից:

Տրանսպորտային աղմուկը մշտական չէ և բնութագրվում է ձայնի համարժեք էներգիայի մակարդակով (L_A ^{hour} դԲԱ):

Տրանսպորտային աղմուկի մակարդակը որոշվել է հաշվարկային մեթոդով ըստ համայնքի փողոցներում տրանսպորտային հոսքերի ինտենսիվության կազմի տվյալների, որոնք ստացվել են տեղում կատարված ուսումնասիրությունների հիման վրա:

Աղմուկի հաշվարկային մակարդակները ստացվել են շարժման առաջին շարքից 7.5մ հեռավորության վրա:

Աղմուկի ամենաբարձր մակարդակները ստացվել են համայնքի կենտրոնական Սաֆարյան և Չարենցի փողոցներում՝ 61 - 66 դԲԱ:

«Պաշտպանություն աղմուկից» ՇՈՒՄ 23.03.2003-ով դեպի աղմուկն ուղղված շենքերի համար թույլատրվում է ձայնի համարժեք մակարդակի բարձրացում 5 դԲԱ-ով, հետևաբար, տրանսպորտային աղմուկի թույլատրվող մակարդակը գերազանցում է 1.0 դԲԱ-ով: Համայնքի մնացած տարածքում աղմուկը չի գերազանցում սահմանային թույլատրելի մակարդակը:

Եղվարդ քաղաքային համայնքի փողոցներում տրանսպորտի շարժման ինտենսիվությունը աննշան է, տրանսպորտային աղմուկը կարճաժամկետ բնույթ ունի և աղմուկի հաշվարկային առավելագույն մակարդակների գերազանցում դիտվում է կենտրոնական փողոցների առանձին հատվածներում:

Այսպիսով աղմուկային անհարմարության վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

- ճանապարհային ցանցի բարելավում
- հիմնական փողոցների ապահովում կանաչ պաշտպանիչ շերտերով
- ավտոպարկի աստիճանաբար Նորացում, ավտոմեքենաների տեխնիկական վիճակի հսկողության ուժեղացում:

Աղմուկից պաշտպանվելու միջոցառումների իրականացումը թույլ կտա կենտրոնական փողոցներին հարող բնակելի գոտում ապահովել աղմուկի սահմանային թույլատրելի մակարդակը:

Կոշտ կենցաղային թափոններ. շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցություն են գործում համայնքի թափոնները, որոնք պահեստավորվում են 5.0 հա մակերեսով աղբյուրում:

Աղբյուրում պահեստավորվող աղբը հիմնականում 5-րդ դասի վտանգավորության կենցաղային և առևտրային թափոններ են: Թափոնների տարեկան ծավալը կազմում է 14.0 հազ. խոր.մ:

Աղբյուրում թափոնները պահեստավորվում են առանց նախնական դասակարգման ու բաժանման և առանց շերտ առ շերտ գրունտային ծածկի:

Թափոնների բնական վնասագերծման մակարդակը 30% -ից չի անցնում:

Հաշվարկային ժամկետի ավարտին ԿԿԹ-ների ծավալը կկազմի 24.0 հազ խոր.մ/տարի:

Կենցաղային թափոնների քանակը հաշվարկվել է ելնելով բնակչության աճից և ընդունելով հեռանկարում համապատասխան շինարարական նորմերի տեսակարար ցուցանիշը՝ տարեկան 1.2 խմ/մարդ:

Թափոնների արդյունավետ կառավարման և շրջակա միջավայրի վրա ազդեցության մեղմման համար նախատեսված են հետևյալ միջոցառումները.

- կենցաղային թափոնների վնասագերծմանը համայնքային աղբյուրում կատարել պարտադիր սանիտարական շերտ առ շերտ հողածածկումով
- աղբյուրի ապահովումը 500 մ սանիտարապաշտպանիչ /բուֆերային/ գոտով
- անկազմակերպ աղբյուրների վերացում
- թափոնների տեղափոխման շարժակազմի և տեխնիկական սարքավորումների Նորացում և արդիականացում:

6.3. ԿԱՆԱՉ ՏԱՐԱԾՆԵՐ

Եղվարդ համայնքի կանաչ տարածքների ընդհանուր մակերեսը ներկայումս կազմում է 856,08 հա, այդ թվում՝ սահմանափակ օգտագործման՝ 736,7 հա, հատուկ նշանակության՝ 116,48 հա:

Չնայած համայնքի կանաչ տարածքների ընդհանուր մեծ մակերեսը չափազանց ցածր է ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներով (զբոսայգիներ, պուրակներ) բնակչության ապահովվածությունը՝ 2,9 հա կամ 2,0 մ²/մարդ:

Գլխավոր հատակագծով նախատեսվում է հիմնադրել 32,0 հա ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներ (զբոսայգիներ, պուրակներ) և բնակչության ապահովվածությունը հասցնել 17,45 մ²/մարդ (աղյուսակ 6.3.):

Սահմանափակ օգտագործման կանաչ տարածքների մակերեսը կավելանա 71,98 հա-ով Նորաստեղծ թաղամասերի կանաչապատման հաշվին և կկազմի 808,68 հա: Հատուկ նշանակության կանաչ տարածքների մակերեսը նույնպես կավելանա (8,56 հա) Նորաստեղծ և գոյություն ունեցող փողոցների և մայրուղիների կանաչապատման հաշվին: Այսպիսով, գլխավոր հատակագծի իրականացման դեպքում համայնքի կանաչապատվածությունը կավելանա 112,54 հա-ով և կկազմի 968,62 հա:

Աղյուսակ 6.3

ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՆԱՉ ՏԱՐԱԾՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԻՍ ԵՎ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Կանաչ տարածքների ֆունկցիոնալ նշանակությունը	Արդի վիճակը 2006 թ.		Նախագծային ցուցանիշները 2020 թ.		
	հա	մ ² /մարդ*	Ընդհանուր	այդ թվում	մ ² /մարդ**

			մակերեսը (հա)	Նորաստեղծ (հա)	
1. Ընդհանուր օգտագործման	2,9	2,0	34,9	32,0	17,45
2. Սահմանափակ օգտագործման	736,7	508,0	808,68	71,98	404,34
3. Հատուկ նշանակության	116,48	80,33	125,04	8,56	62,52
Ընդամենը	856,08	590,4	968,62	112,54	484,31

* բնակչության ներկայիս թվաքանակը՝ 12100 մարդ
 ** բնակչության հեռանկարային թվաքանակը՝ 20000 մարդ:

7. ԻՆՏԵՆՏԻՎԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

7.1. ՋՐԱՍԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Ջրամատակարարման և կենցաղային կոյուղացման բաժինը մշակելիս, որպես ելակետային նյութեր հանդիսանում են՝

1. Եղվարդ քաղաքի գլխավոր հատակագծի առաջադրանքը:
2. Եղվարդ քաղաքի գլխավոր հատակագծով հիմնավորված համայնքի տեխնիկական տնտեսական ցուցանիշները և զարգացման ուղղվածությունը:
3. Եղվարդ քաղաքի ղեկավարության կողմից տրամադրված նյութերը գործող համակարգերի վերաբերյալ: Եղվարդ քաղաքը ներկայումս չուր ստանում է՝
 - Արզական - Երևան համակարգից պոմպերի միջոցով 70.0 լ/վրկ
 - Ապարան - Երևան համակարգից ինքնահոս 12.0լ/վրկ:

Արզականի ջրատարից ջուրը սպառողներին տրվում է օրվա կարգավորման ջրամբարների միջոցով: Ներկայումս գործում են 4750.0, 2000.0, 2X1000.0 և 750.0մ³ ջրամբարներ: Ապարանի ջրատարից ջուրը բաշխիչ ցանց տրվում է առանց ՕԿՁ-ի: Եղվարդ քաղաքի ջրամատակարարման և կոյուղացման համակարգերը ՀՀ կառավարության որոշմամբ հանձնվել է «Երևանջուր» ՓԲԸ-ին: Ներկայումս «Երևանջուր» ՓԲԸ-ն հայտարարել է մրցույթ Եղվարդ քաղաքի ջրամատակարարման համակարգի ուղղված ընդլայնման համար: Ջրաբաշխիչ ցանցը կառուցված է հիմնականում 30-50 տարի առաջ և գտնվում է տեխնիկական ոչ բարվոք վիճակում: Հոսակորուստների մեծության մասին որևէ տեղեկություն չկա: Ցանցը գոտևորված է:

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՋՐԱՊԱՀԱՆՁ

Ջրապահանջը հաշվարկելիս, որպես հիմք ընդունվել է ՇՆԱԿ2.04.01-84*-ը, Եղվարդ քաղաքի հատակագծով որոշված ազգաբնակչությունը հաշվարկային տարում, արդյունաբերության զարգացումը և ուղղվածությունը: Հաշվարկվել են նաև հակահրդեհային և վթարային պաշարների անհրաժեշտ մեծությունները և նրանց վերականգնման համար անհրաժեշտ ելքերը:

Վերը նշված մեծությունների հաշվարկը բերված է ստորև աղյուսակային ձևով:
 Բնակչության կողմից ջրօգտագործման նորմը ընդունված է 200.0 լ/մարդ/օր, որը համապատասխանում է ներկայիս միջազգային նորմերին:

N	Սպառողները	Սպառման նորմը/օր	Ջրապահանջը 2006 թ.			Ջրապահանջը հաշվարկային 2020 թ.		
			քանակ	մ ³ /օր	լ/վրկ	քանակ	մ ³ /օր	լ/վրկ
1	2	3	4	5	6	7	8	9
1	Բնակչությունը	200	12100	2900.0	33.6	20000	4000.0	46.3
2	Հանգստացողները	200	-	-	-	2000	400.0	4.6
3	Արդյունաբերությունը	Բնակչության ծախսը	10%	290.0	3.4	20%	800.0	9.3
	Ենթադրյալներ՝			3190.0	37.0		5200.0	60.2
	Չնախատեսված ծախսեր 10 %			319.0	3.7		520.0	6.0
	Հոսակորուստներ		60%	5263.5	61.1	30%	2451.4	28.4
	Ընդամենը՝			8772.5	101.8		8171.0	94.6

Քանի որ արդյունաբերական օբյեկտների ներկա կազմը և զարգացման հեռանկարները պարզ չեն, ապա հաշվարկներում ընդունվել է.

- Արդյունաբերության ներկա ջրապահանջը՝ կոմունալ ծախսի 10%-ի չափով,
- Հեռանկարում 30%-ի չափով

Հաշվարկներում ընդունվել է նաև 10% չնախատեսված ծախս:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եղվարդ քաղաքի ռելիեֆը հարթ է, ջրամատակարարման բաշխիչ ցանցը չի բաժանվում գոտիների: Քաղաքի այն թաղամասերում, որտեղ ճնշումը կգերազանցի նորմատիվ 6.0 մ.թ. անհրաժեշտ է ջուրը սպառողին տալ ճնշման կափույրների միջոցով:

- Օրվա կարգավորման ջրամբարի ծավալը կազմում է՝
- կարգավորիչ ծավալը

$$W_{զլ} = Q_{\max, \text{օր}} [1 - K_{\sigma} + (K_{\sigma} - 1)(K_{\sigma}/K_{\sigma})^{K_{\sigma}/(K_{\sigma}-1)}]$$

$$Q_{\text{մրջ}} = 66.2 \text{ լ/վրկ}$$

$$Q_{\max, \text{օր}} = 66.2 \times 1.3 = 86.06 \text{ լ/վրկ} = 7435.6 \text{ մ}^3/\text{օր}$$

$$Q_{\max, \text{ժ}} = 86.06 \times 1.3 \times 1.19 = 133.1 \text{ լ/վրկ}$$

$$K_{\sigma} = 1, K_{\sigma} = 2.01$$

$$W_{զ} = 7435.6 [1 - 1 + (2.01 - 1)(1/2.01)^{1.0/2.01-1}] = 3755 \text{ մ}^3$$

- հակահրդեհային ծավալ

$$(2 \times 15 + 5) \times 3.6 \times 3 + 133.1 \times 3.6 \times 3 = 1815 \text{ մ}^3$$

Հաշվի առնելով սեյսմակայունությունը ընդունվում է կրկնակի ծավալը, հավասար 3630 մ³:

Հաշվի առնելով, որ ջուրը տրվում է երկու հզոր աղբյուրներից, ջրի վթարային պաշար չի նախատեսվում:

Այսպիսով ՕԿՁ-ի ծավալը կազմում է 5570 մ³:

Ինչպես տեսնում ենք՝ գործող ջրամբարների ծավալը բավարարում է քաղաքի պահանջները: Անհրաժեշտ է եղած ծավալները վերանորոգել:

Հակահրդեհային պաշարի վերականգնման համար պահանջվող ելքը կազմում է.

$$1815 : 48 : 3600 = 10.5 \text{ ր/վրկ}$$

Ջրամատակարարման համակարգը բարեկարգելու և գոտևորելու համար պահանջվող ներդրումները կազմում են.

N	Աշխատանքի անվանումը	Ներդրումը մլն դրամով
1	2	3
1	Հոսակորուստների վերացում	17.3
2	Ցանցերի վերակառուցում	840.0
3	ՕԿՁ-ների վերակառուցում	60.0
	<i>Ընդամենը՝</i>	<i>917.3</i>

7.2. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿՈՅՈՒՐԻ

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿՈՅՈՒՐԻ

Եղվարդ քաղաքը կոյուղացված է մոտ 80%-ով:

Եղվարդ քաղաքի կոյուղաջրերը Ø 600մմ կոլեկտորով հեռացվում են և լցվում Չարենցավան-Երևան կոլեկտորը Չովունի գյուղի մոտ:

Նորմալ շահագործման բացակայության հետևանքով կոլեկտորը վթարված է և կեղտաջրերն անկանոն ձևով թափվում են ձորակները՝ ստեղծելով հակասանիտարական վիճակ:

Կոյուղու ցանցը կառուցվել է 30-40 տարի առաջ, սպառել է իր աշխատանքային ռեսուրսը և լուրջ վերակառուցման անհրաժեշտություն ունի:

ԿՈՅՈՒՐՈՒ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԵԼՔԵՐԸ

Կեղտաջրերի հաշվարկային ելքերի որոշման համար, որպես հիմք ընդունվել են ՇՆԱԿ 2.04.02-84*-ը, Եղվարդ քաղաքի գլխավոր հատակագծով որոշված ազգաբնակչությանը, հանգստացողների քանակը հաշվարկային տարում, արդյունաբերության զարգացումը և ուղղվածությունը:

Կեղտաջրերի մաքրումը իրականացվում է Երևան քաղաքի կոյուղու մաքրման կայանում:

Կեղտաջրերի ելքերի հաշվարկը հաշվարկային հեռանկարում բերված է աղյուսակային ձևով:

N	Սպառողները	Սպառման նորմ/ օր	Կոյուղու ելքերը 2006 թ.				Կոյուղու ելքերը 2020թ.			
			քանակ	մ³/օր	ր/վրկ	max ր/վրկ	քանակ	մ³/ օր	ր/վրկ	max ր/վրկ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Բնակչությունը	200	12100	2900.0	33.6		20000	4000.0	46.3	
2	Հանգստացողներ	200	-	-	-		2000	400.0	4.6	
3	Արդյունաբերությունը	Բնակչության ծախսից %	10	290.0	3.4		2-0	800.0	9.3	
4	Չնախատեսված ծախսեր	10 %		319.0	6.8			510.0	6.0	
	<i>Ենթաընդամենը՝</i>			<i>3509.0</i>	<i>43.8</i>			<i>5720.0</i>	<i>66.2</i>	
	<i>Անվերադարձ կորուստ 10%</i>			<i>351.0</i>	<i>4.4</i>			<i>572.0</i>	<i>6.6</i>	
	<i>ԵՄԿ տրվող ջրաքանակը</i>			<i>3158.0</i>	<i>39.4</i>	<i>78.8</i>		<i>5148.0</i>	<i>59.6</i>	<i>113.2</i>

Կոյուղու ցանցեր վերակառուցելու և շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ պատշաճ վիճակը ապահովելու համար անհրաժեշտ է կատարել մեծածավալ աշխատանքներ:

Նշված աշխատանքների համար պահանջվող ներդրումները բերված են աղյուսակի ձևով:

N	Աշխատանքի անվանումը	Պահանջվող ներդրումը մլն դրամով
1	2	3
	Ցանցի վերակառուցում և կոլեկտորի վերանորոգում	1 857.0
	<i>Ընդամենը՝</i>	<i>857.0</i>

Համակարգի վերակառուցման ժամանակ պետք է հաշվի առնվեն արտակարգ իրավիճակում կայան ջրամատակարարման և կոյուղացման ապահովումը:

Այս առումով նախատեսվում է.

- ՕԿՁ-ներում հակահրդեհային պաշարի պահում,
- Բաշխիչ ցանցերը պետք է լինեն գոտևորված, օդակային և ապահովված հակահրդեհային հիդրանտներով:

7.3. ՀԵՂԵՂԱՏԱՐ ԿՈՅՈՒՐԻ

Եղվարդ քաղաքի սանիտարահիգիենիկ պատշաճ մակարդակի բարեկարգման համար անհրաժեշտ էլեմենտ է հանդիսանում հեղեղատար կոյուղին:

Հեղեղատար կոյուղու նպատակն է քաղաքի տարածքից անձրևաջրերի և հալոցքից առաջացած ջրերի հեռացումը: Ներկայումս Եղվարդ քաղաքը հեղեղատար կոյուղի չունի և հալոցքի և անձրևաջրերը անկանոն ձևով, առանց մաքրման թափվում են ձորակները՝ ստեղծելով հակասանիտարական վիճակ:

Համայնքի ռեյինֆը հնարավորություն է տալիս հեղեղատար ջրերի ամբողջ ելքը հավաքել և տեղափոխել

Եղվարդ քաղաքի ցածրադիր մասը և լցնել ջրամբարի թողարկի մեջ:

Հեղեղատար ջրերը, թողարկ լցվելուց առաջ պետք է անցնեն համապատասխան մեխանիկական մաքրում: Համաձայն ՇՆԼԿ 2.04.03-85-ի կետ 1.2 անհրաժեշտ է ապահովել կեղտոտված ջրերի մաքրում, որոնք կազմում են առաջացող ջրերի տարեկան ելքի շուրջ 70%:

Անձրևաջրերի թողարկների տեղերը պետք է համաձայնեցվեն սանիտարական հսկողություն և բնապահպանական հսկողություն իրականացնող մարմինների հետ:

Հեղեղային կոյուղին պետք է ընդգրկի քաղաքի ամբողջ տարածքը: Կոյուղու ընդհանուր երկարությունը կկազմի.

- ներթափանցանքային ցանցեր - 15.0 կմ
- փողոցային ցանցեր - 25.0 կմ
- *Ընդամենը՝* - 40.0 կմ:

Հեղեղատար ցանցերը, կախված թաղամասերի նշանակությունից և ճարտարապետական որոշումներից, կարող են լինել բաց առվակների կամ փակ խողովակաշարերի ձևով:

Հեղեղատար կոյուղու համար կարող են օգտագործվել կերամիկական, ե/բետոնե, թուջե և այլ Ø300÷500 խողովակներ:

Ստորև բերված է հեղեղատար կոյուղու շինարարության համար պահանջվող ներդրումների մեծությունը 2020 թ. հեռանկարում:

N	Աշխատանքի անվանումը	Գումարը մլն ՀՀ դրամով
1	2	3
1	Բակային և փողոցային ցանցի շինարարություն	1600.0
2	Մաքրման կայանների շինարարություն	65.0
	<i>Ընդամենը՝</i>	<i>1635.0</i>

7.4. ՈՌՈԳՈՒՄ

Եղվարդ քաղաքի ոռոգման աղբյուր է հանդիսանում Արզնի-Շամիրամ ջրանցքը, որի թողունակությունը ամբողջությամբ ապահովում է համայնքի պահանջը: Արզնի-Շամիրամ ջրանցքը բաժանում է քաղաքը երկու մասի: Գործող ցանցը չի բավարարում համայնքի պահանջը: Ջրանցքից բարձր գտնվող տարածքները պետք է ջրվեն պոմպերի օգնությամբ:

Հետագայում Եղվարդի ջրամբարի սնումը Բասաղ գետից իրականացնելուց հետո, բարձրադիր տարածքների ոռոգումը հնարավոր է այդ համակարգից ինքնահոս ձևով:

- Գլխավոր հատակագծում նախատեսվում է ոռոգման համակարգի վերակառուցում:
- Ոռոգման համակարգի հաշվարկային ելքերը որոշվել են համաձայն.

- գլխավոր հատակագծով որոշված ոռոգելի մակերեսների,
- ՇՆԼԿ 2.04.02-84-ի,
- «Հայջրնախագիծ» ինստիտուտի կողմից մշակված գյուղատնտեսական կուլտուրաների, ոռոգման հաշվարկային ռեժիմները Հայաստանում» աշխատության:

Ոռոգման ռեժիմներն ընտրված են հաշվի առնելով խոնավության դեֆիցիտը հողի ակտիվ շերտում, ըստ կլիմայական պայմանների միջին տարվա համար:

Որպես հաշվարկային ընդունված է երաշտ տարվա ոռոգման ռեժիմը, այսինքն վեգետացիոն շրջանում ջրի 95%-ի ապահովության պայմանը:

Եղվարդ քաղաքի ոռոգելի տարածքների և լվացվող ասֆալտապատ տարածքների մակերեսը, համաձայն գլխավոր հատակագծի, հաշվարկային տարում կազմում է 671.0 հա:

Ոռոգման և փողոցների լվացման համար պահանջվող ջրի ծախսը կազմում է 430.0 լ/կրկ:

Ոռոգման համակարգը վերակառուցելու և համապատասխան սարքերով սարքավորելու համար անհրաժեշտ է կառուցել ջրատարներ և բաշխման ցանց, որի համար ներդրումները կկազմեն.

- Ոռոգման ջրի բաշխման ցանց - 165.0 մլն դրամ:

7.5. ԳԱՉԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ԶԵՌՈՒՅՈՒՄ

Եղվարդ քաղաքը գազ ստանում է Աբովյանի գազակարգավորման կայանից Ø200մմ գազատարով: Բացի այս, կա միացում նաև Չովունու կողմից, որը ներկայումս չի աշխատում:

Քաղաքում կա 13 գազակարգավորման կետ: Ներկայումս գազի տարեկան ծախսը կազմում է մոտ 1.0 մլն խոր. մետր:

1. Գազամատակարարման ոլորտի սխեման

Եղվարդ քաղաքը գազիֆիկացված է 80%-ով: Քաղաքի գազամատակարարման համակարգը երկաստիճանային է: Սույն գլխավոր հատակագծով նախատեսվում է, որ հեռանկարում բնական գազով պետք է ապահովվի.

ա/ բոլոր բնակելի և հասարակական նշանակության այլ շենքերի (կրթական, մշակութային, վարչական և այլն) շեռուցումը,

բ/ բնակչության տաք ջրամատակարարման և սննդի պատրաստման համար անհրաժեշտ ջերմության պահանջարկը,

գ/ արտադրական նշանակության օբյեկտների տնտեսական և տեխնոլոգիական կարիքների համար անհրաժեշտ ջերմության պահանջարկը:

Անհատական բնակելի տների շեռուցումը նախատեսվում է իրականացնել անհատական բնակարանային կաթսաներով կամ գազի վառարաններով, իսկ տաք ջրամատակարարման և սննդի պատրաստման կարիքներն ապահովելու համար բնակարաններում տեղադրվում են 4 օջախանի գազասալիկներ և գազի ջրատաքացուցիչներ:

Բազմաբնակարան շենքերի շեռուցումը և տաք ջրամատակարարումը կարող է իրականացվել կամ անհատական բնակարանային համակարգերով կամ կենտրոնացված եղանակով կցակառուց (ինչպես նաև գոյություն ունեցող) կաթսայատներից:

Այս հարցերը իրենց լուծումը կարող են ստանալ կոնկրետ այդ շենքերի ջերմամատակարարման աշխատանքային նախագծերի մշակման ժամանակ: Ընդ որում, ջերմամատակարարման եղանակի ընտրության համար որոշիչ նշանակություն կարող է ունենալ այն հանգամանքը, թե այդ շենքերում ինչ հնարավորություններ կան առանձին բնակարաններից ծխագազերի հեռացման համար: Սննդի պատրաստումը բոլոր տեսակի բնակելի շենքերում իրականացվում է գազասալիկներով:

Դարոցների, մուր-մանկապարտեզների, հիվանդանոցային, հյուրանոցային և վարչական շենքերի ջեռուցումը և տաք ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել կենտրոնական եղանակով նոր կառուցվող կամ գոյություն ունեցող ոչ մեծ հզորությամբ կաթսայատներից: Անվտանգության պայմաններից ելնելով հասարակական սննդի օբյեկտներում սննդի պատրաստումը նախատեսվում է էլեկտրական էներգիայով:

2. Բնական գազի հաշվարկային ծախսը և տարեկան պահանջարկը
 Հաշվարկների համար ելակետային տվյալները բերվում են ստորև, 2006 թ. մակարդակով.

- բնակչության թիվը 12100 մարդ
- բնակելի ֆոնդը կազմում է 208.600 հազ. մ²
- մենատների և բազմաբնակարան շենքերի ծավալը կազմում է 730.1 հազ. մ³:

Հեռանկարային 2020 թ. մակարդակով.

- բնակչության թիվը 20000 մարդ
- նոր կառուցվող (հիմնականում կոտեջային շենքով) բնակելի ֆոնդը 1701.5 հազ. մ² ընդհանուր օգտակար մակերեսը մոտավորապես 5955.0 հազ. մ³ ընդհանուր ծավալով:

Ջեռուցման համար ջերմության պահանջարկը
 Բնակելի շենքերի ջեռուցման համար անհրաժեշտ ջերմային էներգիայի հաշվարկային հզորությունը (Q_n) հաշվվում է հետևյալ բանաձևով.

$$Q_n = \sum X_2 \times V(t_u - t_n) \times 10^{-3} \text{ կվտ (հազ. կկալ/ժ),}$$

որտեղ՝

X₂ - շենքի ջեռուցման տեսակարար բնութագիրն է, գոյություն ունեցող անհատական տների, ինչպես նաև նոր կառուցվող բնակելի ֆոնդի համար, նկատի ունենալով էներգախնայողական միջոցառումների կիրառումը, ընդունվում է՝ 0.75 կտ/մ³ °C (0.65 կկալ/ժ մ³ °C),
 V - շենքերի տվյալ տեսակի գումարային ծավալն է նրանց արտաքին չափերով, մ³,
 t^u-t_n - համապատասխանաբար ջեռուցվող շենքի ներսի և ջեռուցման համար դրսի օդի հաշվարկային ջերմաստիճաններն են, ըստ ՀՀՇՆ IV - 12.02.01 t_n=18°C, իսկ t_n=20°C:
 Ջերմության տարեկան պահանջարկը ջեռուցման համար որոշվում է հետևյալ բանաձևով,
 $Q_n = 24 \times n \times Q_h(t_u - t_n / t_u - t_n) \times 10^{-3} \text{ ՄՎտժ (գկալ),}$

որտեղ՝

24 - օրվա ժամերի թիվն է,
 n - ջեռուցման սեզոնի տևողությունն է, 162 օր
 t_n - ջեռուցման սեզոնի ընթացքում դրսի օդի միջին ջերմաստիճան γ, °C:
 Ըստ ՀՀՇՆ IV - 12.02.01 n=162 օր t_n=1°C:
 Հասարակական նշանակության՝ կրթական, մշակութային, առողջապահական վարչական և այլ շենքերի ջեռուցման համար ջերմության հաշվարկային հզորությունը և տարեկան ծախսն ընդունվում է բնակելի շենքերի ծախսի 20%-ի չափով:
 Ստորև բերված աղյուսակ 1-ում ներկայացված են ջեռուցման համար ջերմության հաշվարկային հզորությունները և տարեկան ծախսերը շենքերի առանձին տեսակների համար ներկա (2006 թ.) և հեռանկարային (2020 թ.) մակարդակներով:
 Ջեռուցման համար ջերմային էներգիայի հաշվարկային հզորությունները կկալ/ժ և տարեկան պահանջարկները գկալ.

Աղյուսակ 4.4.5.1.

Շենքի տեսակները	2005 թ. համար			2020 թ. համար		
	Գումարային ծավալը հազ. մ ³	Ջերմության հաշվ. հզորութ.	Ջերմության տարեկան ծախսը	Գումարային ծավալը հազ. մ ³	Ջերմության հաշվ. հզորութ.	Ջերմության տարեկան ծախսը
1	2	3	4	5	6	7
Բազմաբնակարան և անհատական տներ	5955.0	147088.5	255630.0	5955.0	147088.5	255630.0
Նոր կառուցվող բնակելի տներ	-	-	-	730.1	18033.4	31340.0
Հասարակական շենքեր	-	4405.5	6801.5	-	8811.0	13603.0
ԸՆԴԱՄՆԵՐ՝		151494.0	262431.5		173932.9	300573.0

ՏԱՔ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՍՆՆԴԻ ԴԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՍԱՐ ՋԵՐՄՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԴԱՀԱՆՋԱՐԿ

Նախատեսվում է, որ յուրաքանչյուր բնակարանում տեղադրվում է գազային ջրատաքացուցիչ և 4 օջախազագասայիկ՝ համաձայն ՇՆՁ IV-12.101-04 այդպիսի դեպքում մեկ մարդու համար ջերմության տարեկան ծախսը տաք ջրամատակարարման և սննդի պատրաստման համար կազմում է 2.4 գկալ/մարդ (10 ԳՋ/մարդ): Ելնելով նշված բնակելի ջերմության տարեկան պահանջարկը տաք ջրամատակարարման և սննդի պատրաստման համար կլինի՝
 2005 թ. համար - 34 800 գկալ
 2020 թ. համար - 52 800 գկալ:
 Հասարակական շենքերում սննդի պատրաստումը նախատեսվում է իրականացնել էլեկտրական էներգիայով:
 Հասարակական նշանակության այլ շենքերում տաք ջրամատակարարման համար անհրաժեշտ է ջերմության ծախսը փոքր մեծություն է և տվյալ դեպքում այն գնահատվում է մոտավորապես 900 գկալ/տարի:
 Արտադրական նշանակության օբյեկտների, նրանց արտադրողականությունների վերաբերյալ կանխատեսումները բացակայում են:
 Ելնելով ջերմային էներգիայի տարեկան պահանջարկներից՝ որոշվել են բնական գազի տարեկան պահանջարկներ Եղվարդ քաղաքի համար ընդունելով գազի ստորին ջերմատվությունը 8000 կկալ/մ³ և գազասպառիչ սարքերի ՕԳԳ - 085:
 Հաշվարկների արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում.
 Բնական գազի տարեկան պահանջարկները Եղվարդ քաղաքի համար

Աղյուսակ 4.4.5.2.

Ջերմության էներգիայի սպառիչներ	2005 թ. համար		2020 թ. համար	
	Ջերմության պահանջարկը գկալ	Բնական գազի պահանջարկը հազ. նմ ³	Ջերմության պահանջարկը գկալ	Բնական գազի պահանջարկը հազ. նմ ³
1	2	3	4	5
Ջեռուցում	262431.5	38592.9	300573.0	44201.9
Բնակչության տաք ջրամատ. և սննդի պատրաստում	34800.0	5117.6	52800.0	7764.7
Հասարակական նշանակության շենքեր	900.0	132.4	1900	279.4
<i>Ընդամենը՝</i>	<i>298131.5</i>	<i>43842.9</i>	<i>355273.0</i>	<i>52246.0</i>

7.6. ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

Եղվարդ քաղաքի էլեկտրամատակարարման աղբյուր են հանդիսանում Աշտարակ և Նաիրի 110/35/10 ենթակայանները, որտեղից Աշտարակ և Նոր Հաճն 35կՎտ գծերով հոսանքը տրվում է Եղվարդի 35/10 ենթակայան, այստեղից քաղաքային 10/04կՎտ ենթակայաններով հոսանքը տրվում է սպառողներին:

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԲԵՆՎԱԾՆԵՐԻ ՀԱԾՎԱՐԿ

Հաշվարկային էլեկտրական բեռնվածությունը հաշվարկային առավելագույն հզորությունը հաշվարկված է որպես հզորությունների գումար՝

ա/ կոմունալ - կենցաղային պահանջների, հասարակական, կուլտուր - կենցաղային և լուսավորության,

բ/ արդյունաբերական ձեռնարկությունների:

Բեռնվածքների հաշվարկն ամփոփված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 4.4.6.1.

Անվանումը	2006 թ. համար			2020 թ. համար		
	Կոմունալ կենցաղային	Արդյունաբերություն	Ընդամենը	Կոմունալ կենցաղային	Արդյունաբերություն	Ընդամենը
1	2	3	4	5	6	7
Եղվարդ	13775	1377	15152	20900	4180	25080
<i>Ընդամենը՝</i>	<i>13775</i>	<i>1377</i>	<i>15152</i>	<i>20900</i>	<i>4180</i>	<i>25080</i>

Կոմունալ-կենցաղային կարիքների համար պահանջվող առավելագույն հզորությունների հաշվարկը կատարված է 1 բնակչի խոշորացված տարեկան ծախսով 950 կՎտ/ժամ:

Նախագծային տարածքների էլեկտրամատակարարման ծրագրի իրականացման համար խոշորացված կապիտալ ներդրումների ցանկը ներկայացվում է N 2 աղյուսակում:

Աղյուսակ 4.4.6.2.

N	Օբյեկտ	Քանակ	Արժեքը մլն դր.
1	2	3	4
1	110/35/10կՎ ենթակայանի հզորության ավելացում	1 հ	10.0
2	Գործող 10/0.4կՎ ենթակայանների հզորությունների ավելացում	6 հ	1.5
3	Ցանցերի վերակառուցում Նախագծային 10/0.4 ենթակայաններ	6 հ	55.0
4	10կՎ օդային գծերի տեղափոխում և նոր սնող գծերի կառուցում	2.7 կմ	16.0
5	10կՎ կաբելային գծեր	3.5 կմ	87.5
	<i>Ընդամենը՝</i>		<i>170.0</i>

Քաղաքի գործող ցանցը նորմալ վիճակում պահպանելու համար առաջարկվում են հետևյալ միջոցառումները (մինչև 2020 թ. ներառյալ).

1. Ցանցի մասնակի վերանորոգում (մինչև 60%) - 100.0 մլն դր.:

2. Միջոցառումներ, ուղղված համակարգային կորուստների նվազեցմանը, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի հաշվարկի համակարգի սարքավորումների լրիվ փոխարինում ինդուկցիոն էլեկտրոնային - 50.0 մլն դրամ:

Այսպիսով, նշված միջոցառումների և նոր բնակավայրերի էլեկտրամատակարարման համակարգի իրականացման համար գումարային ներդրումների քանակը կկազմի 320.0 մլն դրամ:

Ելակետային կյութեր՝

1. СНиП 2.07.01-83

Градостроительство, планировка и застройка городских и сельских поселений.

2. ВСНЭ 7-83

Инструкция по проектированию городских и поселковых электрических

7.7. ԿԱՊԻ ՑԱՆՅԵՐ

ՀԵՌԱԽՈՍԱԿՑՈՒՄ

Եղվարդ քաղաքի հեռախոսային ցանցը սպասարկվում է սեփական 3000 համ. հեռախոսակայանից, որը թվայնացված չէ: Աբոնենտների թիվը 2684 է:

Նախատեսված է նոր թաղամասերի կառուցում, որը կբերի բաժանորդների քանակի ավելացման և հեռախոսակայանի հզորության ավելացման՝ 2 անգամ:

ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ներկայումս Եղվարդում գործում են 3 ռուսական և բոլոր հայկական ծրագրերը:

ՌԱԴԻՈՖԻԿԱՑՈՒՄ

Քաղաքային լարային ռադիոկայան արդի ժամանակաշրջանում լուրջ փոփոխություններ չի կրել:
Արդի ժամանակ այն ծառայում է որպես լրատվության միջոց:

Աղյուսակ 4.4.7.1.

N	Անվանում	Չափ. միավ.	Քանակ	Միավորի արժեքը հազ. մլն դր.	Ընդհանուր արժեքը հազ. մլն դր.
1	2	3	4	5	6
1	Ավտոմատ հեռախոսային կայան	հատ	1	27.0	27.0
2	Մայլոխ S77 - 11200x2x0.6	կմ	8	9.6	76.8
	<i>Ընդամենը՝</i>				<i>103.8</i>

1/ Атлас сельского хозяйства Армянской ССР - М.-Е., 1981.

2/ Районирование территории Армянской ССР по состоянию воздушного бассейна.-АРМНИИАСПУ, 1990.

Գ Լ ՈՒ Խ 2

ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եղվարդ համայնքի գոտևորման նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության N ԱՇՁԲ 03/39-2 պատվերով, տեխնիկական առաջադրանքի և գոտևորման կարգի պահանջների համաձայն:
Գոտևորման նախագծի իրավական հիմքերն են.

- Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը,
- ՀՀ բնակավայրերի հատակագծման և կառուցապատման նորմերը,
- Եղվարդ համայնքի գլխավոր հատակագիծը,
- ՀՀ գործող օրենքները և ենթաօրենսդրական ակտերը:

Կառուցվածքային և բովանդակային առումով նախագծում հաշվի է առնվել 2000 թ. մշակված Գյումրի քաղաքի պատմական կենտրոնի գոտևորման նախագծի փորձը:
Գոտևորման նախագծի հիմնական սկզբունքներն են՝

- գոյություն ունեցող ճարտարապետաքաղաքաշինական ավանդույթների պահպանումը,
- պատմաճարտարապետական արժեք չունեցող և միջավայրի գեղագիտական ամբողջական կերպարը խաթարող կառույցների աստիճանական վերացումը,
- պատմամշակութային հուշարձանների պահպանման և դրանց առավել շահեկան օգտագործման ապահովումը,
- կազմավորված միջավայրին անհարիր խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների վերատեղաբաշխումը,
- տրանսպորտ-հետիոտն ակտիվության կանոնակարգումը և կարգավորումը,
- բնական այգեպուրակային լանդշաֆտի վերականգնման, պահպանման և հետագա օգտագործման միջոցառումների իրականացումը,
- թանգարանային գործի, հուշարձանների գիտական ցուցադրման, ավանդական արհեստների արտադրության, զբոսաշրջիկների սպասարկման ու գովազդի հետ կապված հնարավորությունների խրախուսումը:

1. ՆԱԽԱԳԾԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Սույն գոտևորման նախագիծը, հանդիսանալով քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ, ծառայում է որպես քաղաքաշինական գործունեության և հողօգտագործման ժամանակ առաջացող բոլոր հարցերի և վեճերի լուծման հիմնական իրավական միջոց՝ սահմանելով բնակավայրի փաստացի և հեռանկարային օգտագործման և կառուցապատման նկատմամբ պարտադիր պահանջները՝ բարենպաստ կենսամիջավայրի ձևավորման համար:

Հիմնական նպատակներն են՝

- հասարակության առողջության, անվտանգության և բարեկեցության ապահովում քաղաքաշինական գործունեության, հողիատկացման և կառուցապատման գործընթացների կարգավորման և համակարգման միջոցով,
- քաղաքի զարգացման ընթացքում առողջ և գրավիչ միջավայրի ձևավորման ապահովման,
- հողօգտագործման տեսակների դասակարգումն ըստ դրանց նպատակային օգտագործման, քաղաքաշինական և այլ սահմանափակումների,
- շրջակա միջավայրի և պատմամշակութային արժեքների պահպանում,
- քաղաքի կազմավորված, պատմաճարտարապետական արժեք ներկայացնող հատվածների վերակառուցման և վերանորոգման խրախուսում՝ միջավայրի առանձնահատուկ ճարտարապետական կերպարի պահպանում,
- կազմավորված քաղաքաշինական միջավայրին համապատասխան գեղագիտական քաղաքականության ապահովման՝ ժամանակակից դինամիկ զարգացման պահանջների հաշվառումով:

2. ԿԻՐԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՈՐ

Գոտևորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը պարտադիր են՝

- քաղաքի տարածքում կատարվող վերակառուցողական, շինարարական, վերականգնողական, վերանորոգման, բարեկարգման, կանաչապատման աշխատանքների, ինչպես նաև հողերի և առանձին օբյեկտների նպատակային օգտագործմանը և շահագործմանը վերագրվող պահանջները գործնականում իրականացնելու և պահպանելու համար,
- գոտևորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը կարգավորում են նաև շենքերի և

շինությունների ներսում կատարվող գործունեության այն հետևանքները, որոնք ազդում են շրջակա միջավայրի բնականոն վիճակի վրա, այն է՝ աղմուկին, վնասակար արտանետումներին, տրանսպորտային և հետիոտն հոսքերի մեծ զանգվածներ առաջացնող գործունեության տարբեր տեսակներին վերաբերող հատուկ պահանջների սահմանումը և այլն,

- գոտևորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը պարտադիր են նաև կառուցապատման և հողամասերի օգտագործման ինտենսիվության, շենքերի և շինությունների հարկայնության, դրանց արտաքին ճակատների ձևավորման, հարդարանքի, գովազդների, ցուցանակների, փոքր ճարտարապետական ձևերի տեղադրման համար:

3. ՆԱԽԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Գոտևորման նախագիծը հիմնվում է «ընդունված գոտի-թույլատրելի օգտագործման ձև» սկզբունքի վրա: Նախագծում, ըստ առանձին գոտիների, սահմանվում են հողօգտագործման և կառուցապատման թույլատրելի օգտագործման տեսակները, որոնց համապատասխանող քաղաքաշինական գործունեության իրականացման համար լրացուցիչ պահանջներ, քննարկումներ, համաձայնեցումներ չեն նախատեսվում: Սահմանվել են թույլտվության հետևյալ ձևերը՝

Թույլատրվող օգտագործում,
Անթույլատրելի օգտագործում:

Նախագծում հաշվի են առնված նաև հողօգտագործման սխեմայում ներառված դրույթները: Պահանջները տարբերակվում են մեկից մյուս գոտի անցնելիս, բայց հաստատուն են յուրաքանչյուր գոտու ներսում:

4. ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՊԸ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՀԵՏ

Գոտևորման նախագիծը քաղաքի գլխավոր հատակագծի իրագործման հիմնական ծրագրային քաղաքաշինական փաստաթուղթն է: Այն անմիջականորեն կապված և համաձայնեցված է քաղաքի գլխավոր հատակագծում նախանշված զաղափարների, զարգացման ուղղությունների, բոլոր տեսակի հողերի նպատակային օգտագործման, կառուցապատման ինտենսիվության և բնակչության տեղաբաշխման իրականացման գործընթացի հետ:

5. ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

5.1. ՍԱՀՄԱՆՆԵՐ

Նախագծվող տարածքի սահմանները համապատասխանում են գլխավոր հատակագծով տրված սահմաններին: Տարածքի ընդհանուր մակերեսը 2427.26 հա, այդ թվում՝ 786,6 հատակագծային սահմաններում:

ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ (ԳՈՏԻՆԵՐԻ) ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Նախագծվող գոտևորման շրջանների (գոտիների) սահմանները որոշվում են հետևյալ կերպ՝

- Եթե գոտևորման շրջանի սահմանը համընկնում է հողամասի սահմանի հետ, ապա այդ հողամասի սահմանը համարվում է գոտևորման շրջանի սահմանը:
- Եթե գոտևորման շրջանի սահմանը անցնում է փողոցով, ճեմուղով, երկաթգծի ուղիներով, գետով կամ այլ գծային ծրագիծ ունեցող տարածքային միավորներով, ապա գոտևորման շրջանի սահման է համարվում դրանց առանցքային գիծը:
- Եթե գոտևորման շրջանի սահմանը անցնում և կիսում է ինչ-որ մի առանձին տիրույթ, ապա գոտևորման շրջանի սահմանը որոշվում է գծագրում բերված համապատասխան եզրագծով, կամ հեռավորության նշումով:
- Եթե գոտևորման շրջանի սահմանների նկարագրի վերաբերյալ այնուամենայնիվ անորոշություն կա կամ տարակարծություններ են հայտնվել, ապա վերջնական որոշումը կայացնում է քաղաքապետարանի գոտևորումը վերահսկող քաղաքաշինական համապատասխան մարմինը:

5.2. ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

տես գլ. 1, 2-րդ պարբերություն

5.3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Եղվարդ համայնքի գլխավոր հատակագծի մշակման փուլում նախատեսված են միջոցառումներ հողային, ջրային, օդային ավազանների պահպանության համար:

5.4. ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ

Գոտևորման նախագծի կառուցվածքային հիմնական բաղկացուցիչներն են գոտևորման գծագրական ու տեքստային մասերը:

Նախագիծը ներառում է՝

- գործառական գոտևորումը՝ հողատարածքների առանձնացումն ըստ գործառական օգտագործման՝ սահմանելով թույլատրելի օգտագործման տեսակները, ամրագրելով ընդհանուր տարածքի մակերեսի նկատմամբ վերջիններիս սահմանային չափաբաժինները,
- ծավալատարածական գոտևորումը՝ ամրագրելով կառուցապատման բնույթն արտահայտող ցուցանիշները (կառուցապատման խտություն, շենքերի, շինությունների բարձրություն, կառուցապատված և կանաչապատ մակերեսների հարաբերակցություն և այլն), տվյալ տարածքում թույլատրելի չափաբաժինների հաշվառմամբ:

6. ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԹՈՒՅՆԱՏՐԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ (ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄՆԵՐԻ) ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓՎԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

6.1. ԳՈՏԻՆԵՐ

Քաղաքի հեռանկարային գոտիներում թույլատրելի օգտագործումների (կառուցապատումների)

սահմանափակումների հիմքն է՝ գլխավոր հատակագծի նախագծում՝ ըստ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի հոդված 14-ում սահմանված պահանջների կատարված գոտևորումը: Հիմնական և օժանդակ գոտիներն առանձնացվել են հաշվի առնելով հողամասերի նպատակային նշանակությունը, ինչպես նաև քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային, ինժեներատեխնիկական և այլ բնույթի սահմանափակումները, հողամասերի գործառնական նշանակությունը, առանձին հողատեսքերին և ընդունված թույլատրելի օգտագործումներին ներկայացվող ճարտարապետահատակագծային պահանջները:

Գոտիներում սահմանվում են տարբեր ինտենսիվությամբ օգտագործվող հիմնական տարածքային միավորները, դրանց նախընտրելի հողօգտագործման ձևերը և կառուցապատման չափորոշիչները՝ կառուցապատողների կողմից փուլ առ փուլ կառուցապատման համար, խրախուսելու տարածքի բազմաբնույթ օգտագործումը, ապահովելու համաքաղաքային համալիրների տեղաբաշխումը, ներդաշնակորեն ինտեգրելու հատուկ նախագծվող համալիրները կազմավորվող քաղաքաշինական միջավայրում: Միևնույն տարածքային միավորին համապատասխանում է միայն մեկ գոտի:

Անհատական բնակելի կառուցապատման գոտի, ԱԿԳ

Բազմաբնակարան բնակելի կառուցապատման գոտի, ԲԿԳ

Խառը կառուցապատման գոտի, ԽԿԳ

Համայնքային նշանակության հասարակական գործառնությունների զարգացման գոտի, ՀԳԶԳ

Բնապատկերային գոտի (ԲՊԳ)

Հասարակական օգտագործման կանաչ գոտի, ՀՕԿԳ

Հատուկ նշանակության գոտի, ՀՆԳ

Արտաքին տրանսպորտի գոտի, ԱՏԳ

Արտադրական գոտի, ԱԳ

Հատուկ պահպանման գոտի, ՀԳ

Կոմունալ և ինժեներական ենթակառուցվածքների և սարքավորումների գոտիներ ԿԻԳ

Բուժերային գոտի, ԲԳ

Ծանոթություն. 1. Յուրաքանչյուր գոտու վրա տարածվում են նաև լրացուցիչ սահմանափակումներ, կապված՝ համապատասխանաբար պատմաճարտարապետական հուշարձանների պահպանման և առավելագույն ընկալման հնարավորությունների բացահայտման, սանիտարահիգիենիկ կամ բնապահպանական պահանջների բավարարման, բնական լանդշաֆտի արժեքավոր ձևերի վերականգնման, էկոհամակարգերի տարբեր խախտումների փոխհատուցման գործընթացների կանոնակարգման, ինժեներական նախապատրաստման համալիր միջոցառումների պարտադիր իրականացման ապահովման հետ պայմանավորված կառուցապատման սահմանափակումների, սանապահպանման կամ օտարման գոտիների ապահովման պահանջների հետ:

2. Կոմունալ և ինժեներական ենթակառուցվածքներն ու սարքավորումները տեղակայվում են գլխավոր հատակագծում հատուկ առանձնացված տարածքներում՝ Նորմերով պահանջվող համապատասխան սանիտար պաշտպանիչ գոտիներով և թույլատրելի օգտագործման ձևի աղյուսակում հատուկ նշված չէն:

3. Թույլատրելի օգտագործման ձևի աղյուսակում հատուկ չեն նշվում նաև գլխավոր հատակագծի գծագրերում բնակավայրի տարածքի այլ հողերի կազմում նախատեսվող աստիճանական վերապարֆիլավորման բուժերային գոտիները:

Ճանապարհների, գերեզմանների, էներգետիկայի և այլ կոմունալ օբյեկտների այն պաշտպանիչ գոտիների տարածքները, որոնք այսօր արդեն զբաղված են բնակելի և հասարակական կառույցներով նույնպես վերափոխվում են բուժերային գոտիների, որտեղ մինչև հաշվարկային ժամկետի ավարտը պետք է արգելվեն բոլոր նոր բնակելի և հասարակական կառուցապատման և վերանորոգման աշխատանքները:

6.2. ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ՀԻՄՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐՆ ԵՆ՝

1. Բնակելի կառուցապատում

- Առանձնատներ տնամերձ հողամասերով,
- Բազմաբնակարան տներ:

2 Հյուրանոցային ծառայություններ՝

- Հյուրանոցներ (սահմանափակ կոնտինգենտի համար, մինչև 200 տեղ),
- Մոթելներ (առանց սահմանափակումների),
- Հյուրանոցներ, մոթելներ, քեմփինգներ՝ սահմանափակված մինչև 20 տեղ:

3. Կրթական հաստատություններ

- Մանկապարտեզներ, մանկամսուրներ,
- Միջնակարգ դպրոցներ,
- Վճարովի և կիրակնօրյա դպրոցներ ,
- Համալսարաններ, ինստիտուտներ, քոլեջներ:

4. Բուժական հիմնարկություններ

- Բուժական կաբինետներ,
- Դոլիկլինիկաներ:

5. Վարչական, ֆինանսական հիմնարկություններ և ծառայություններ

- Համայնքային նշանակության վարչակառավարման հիմնարկներ,
- Անհատական գրասենյակներ (օֆիսներ),
- Բանկեր, բորսաներ և դրամավարկային այլ հաստատություններ, դրանց գրասենյակներ,
- Փոստատներ, կապի բաժանմունքներ,
- Ոստիկանական տեղամասեր,
- Հրշեջ ծառայություններ:

6. Կենցաղապասարկման առաջնային ծառայություններ

- Վարսավիրանոցներ,
- Զինամթրման ընդունման կետեր, լվացքատներ,
- Կոշիկի, հագուստի և կենցաղային տեխնիկայի վերանորոգման արհեստանոցներ:

7. Կրոնական հիմնարկություններ

- Եկեղեցիներ, մատուռներ,
- Այլ կառույցներ եկեղեցականների համար:

8. Հասարակական օգտագործման և մարզական հաստատություններ

- Գրադարաններ, թանգարաններ, ցուցահանդեսներ, պատկերասրահներ, արվեստի սրահներ,
- Ակումբներ և հասարակական հավաքատեղիներ, գիշերային ակումբներ,
- Թատրոններ և կինոթատրոններ,
- Բուսաբանական, կենդանաբանական, մշակույթի, հանգստի և մանկական տարբեր տիպի այգիներ,
- Սեղանի թենիս, բիլիարդի դահլիճներ, մարզադահլիճներ, ջրավազաններ և այլ մարզական կառույցներ,
- Մարզադաշտեր, խաղադաշտեր,
- Մասնավոր բացօթյա ռեկրեացիոն կառույցներ՝ լողի, թենիսի և այլ ակումբներ,
- Պուրակներ անվավոր չմուշկների և այլնի համար,
- Հրաձգարաններ:

9. Առևտրական օբյեկտներ

- Սուպերմարքեթներ, հանրախանութներ, առևտրի կենտրոններ,
- Մանրածախ առևտրի խանութներ, տաղավարներ, կրպակներ,
- Ավտոպահեստամասերի վաճառք,
- Տոնավաճառներ, ֆերմերային շուկաներ (բացառությամբ կենդանիների վաճառքի),
- Կենդանի ձկների վաճառք,
- Բացօթյա մանրածախ, մեծածախ առևտուր,
- Կենդանիների վաճառք:

10. Հասարակական սննդի օբյեկտներ

- Ավանդական ուտեստների խոհանոց, պանդոկներ, խորտկարաններ, մառաններ, ճաշարաններ,
- Ռեստորաններ, ոչ ավելի, քան 20 նստելատեղով,
- Սրճարաններ և բարեր, ոչ ավելի, քան 20 նստելատեղով,
- Բացօթյա ռեստորաններ, բարեր, սրճարաններ,
- Ռեստորաններ (առանց սահմանափակումների),
- Սրճարաններ և բարեր (առանց սահմանափակումների),
- Արագ պատրաստվող ուտեստների խորտկարաններ:

12. Արտադրական օբյեկտներ

- Արտադրական մասնաշենքեր
- Փոքր բիզնեսի արտադրություններ, որոնք կապված չեն աղմուկի, պայթուցիկ և հրդեհավտանգ նյութերի, մթնոլորտի աղտոտման (ծուխ, գազեր) հետ,
- Հացի, հրուշակեղենի, ըմպելիքի, սննդամթերքների փոքրածավալ արտադրություն,
- Տնայնագործական արտադրություն (վերամշակում, վերանորոգում, նորոգում, ներկում, մաքրում, սարքավորումների հավաքում, սեփական արտադրանքի առևտուր,
- Արհեստագործական արտադրամասեր և արհեստանոցներ (ավանդական իրերի արտադրություն):

13. Առողջարանային և հանգստի օբյեկտներ

- Շուրջտարյա կլիմայաբուժության կենտրոններ,
- Բուժական տաղավարներ,
- Ամառային, ձմեռային հանգստի օբյեկտներ,
- Հյուրանոցներ, մոթելներ,
- Սպորտային սարքավորումների վարձակալության կետեր,
- Առևտրի օբյեկտներ,
- Ռեստորաններ, սրճարաններ, զվարճանքի օբյեկտներ (սահմանափակ կոնտինգենտի համար),
- Ավտոմոբիլային պարկ (հատուկ բուժական երթուղիների կազմակերպման համար),
- Ճարտարապետական փոքր ձևեր:

14. Կոմունալ օբյեկտներ և ծառայություններ

- Պահեստներ,
- Գերեզմանատներ:

15. Ավտոծառայություններ և տրանսպորտային կառույցներ

- Ավտոբուսային կայարաններ,
- Տրանսպորտի հավաքակայաններ,
- Բենզալիցքավորման կայաններ,
- Ավտոկայանատեղեր:

16. Գյուղատնտեսական

- Գյուղատնտեսական մթերքների վերամշակում, արտադրություն,
- Գյուղատնտեսական աշխատանքներ (այգեգործություն),
- Գյուղատնտեսական աշխատանքներ (անասնապահական համալիրներ՝ ընտանի կենդանիների բուծում),
- Տնկարաններ, անտառային տնտեսություն:

17. Ինժեներական ենթակառուցվածքներ և սարքավորումներ

- Խմելու ջրի օրվա կարգավորիչ ջրամբարներ (ՕԿՁ),
- Ոչ մետաղական (պոլիէթիլենային, բետոնե) ստորգետնյա խողովակաշարեր,

- Մետաղական խողովակաշարեր (երկաթբետոնե, թուջե),
- Ջրամատակարարման բաշխիչ հորեր,
- Կոյուղու ցանցային հորեր,
- Վերգետնյա հաղորդալարեր,
- Մալուխային էլեկտրահաղորդագծեր,
- Էլեկտրական ենթակայաններ,
- Ավտոմատ գազաբաշխիչ կայան (ԱԳԿ),
- Գազակարգավորիչ պահարանային կետեր (ԳԴԿ),
- Փոքր հզորության լույս կաթսայատներ մինչև 5 ՀԿ/ժամ,
- Հեռախոսային կապի բաշխիչ կետեր (պահարանային),
- Կապի ավտոմատ հեռախոսային կայան:

18. Ոչ հիմնական շինություններ

- Կրպակներ,
- Տաղավարներ,
- Ճարտարապետական փոքր ձևեր:

6.3. ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐ	ԱԿԳ	ԲԿԳ	ԽԿԳ	ՀԳԿԳ	ԲԳ	ՀՕԿԳ	ՀԳ	ԱՏԳ	ԱԳ	ՀՊԳ
Առանձնատներ տնամերձ հողամասերով՝	Թ		Թ							
Բազմաբնակարանային տներ		Թ	Թ	Թ						
Հյուրանոցներ (մինչև 200 տեղ)				Թ						
Մոթելներ (առանց սահմանափակումների)				Թ						
Ճանապարհամերձ տներ (վարձ. տրվող գյուղ. տներ)	Թ		Թ					Թ		
Հյուրանոցներ, մոթելներ, (սահմանափակ կոնտինգենտով)	Թ	Թ	Թ	Թ	Թ			Թ		
Պանսիոնատներ, առողջարանային մասնաշենքեր										
Մանկապարտեզներ, մանկամսուրներ	Թ	Թ	Թ	Թ						
Վճարովի և կիրակնօրյա դպրոցներ			Թ							
Միջնակարգ դպրոցներ	Թ	Թ		Թ						
Համալսարաններ, ինստիտուտներ, քոլեջներ				Թ						
Բուժական կաբինետներ	Թ	Թ	Թ	Թ				Թ		
Պոլիկլինիկաներ			Թ	Թ						
Զաղաքային նշանակության վարչակառավարման հիմնարկներ դրանց գրասենյակներ (օֆիսներ)				Թ						
Անհատական գրասենյակներ (օֆիսներ)	Թ	Թ	Թ	Թ						
Բանկեր, բորսաներ և դրամավարկային այլ հաստատություններ, դրանց գրասենյակներ				Թ						
Փոստատներ, կապի բաժանմունքներ			Թ	Թ						
Ոստիկանական տեղամասեր, Վարսավիրանոցներ	Թ	Թ	Թ	Թ				Թ		
Քիմաքրման ընդունման կետեր, վազքատներ			Թ	Թ						
Կոշիկի, հագուստի և կենցաղային տեխնիկայի վերանորոգման արհեստանոցներ	Թ	Թ	Թ	Թ						
Եկեղեցիներ, մատուռներ				Թ						Թ
Այլ կառույցներ եկեղեցականների համար				Թ						Թ
Գրադարաններ, թանգարաններ, ցուցահանդեսներ, պատկերասրահներ, արվեստի սրահներ			Թ	Թ						
Ակումբներ և հասարակական հավաքատեղիներ, գիշերային ակումբներ			Թ	Թ						
Թատրոններ և կինոթատրոններ,			Թ	Թ						
Բուսաբանական, կենդանաբանական, մշակույթի, հանգստի և մանկական տարբեր տիպի այգիներ					Թ	Թ				
Կեղևախաղարաններ, սեղանի թենիս, բիլիարդի դահլիճներ, մարզադահլիճներ						Թ				

7.1. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱԴԱՏՄԱՆ ԳՈՏԻ (ԱԿԳ)

Այս գոտին առանձնացվում է հիմնականում արդեն կազմավորված առանձնատնային կառուցապատում ունեցող թաղամասերի վերակառուցման, կանոնակարգման համար:

7.1.1. Թույլատրված օգտագործման ձևեր

Բնակելի

- Առանձնատներ տնամերձ հողամասերով:

Հյուրանոցային

- Հյուրատներ (սահմանափակ հզորությամբ),
- Վարձակալությամբ տրվող առանձնատներ:

Կրթական հաստատություններ

- Միջնակարգ դպրոցներ,
- Մանկապարտեզներ, մանկամսուրներ:

Վարչական, ֆինանսական հիմնարկություններ և ծառայություններ

- Անհատական գրասենյակներ (օֆիսներ):

Բուժական

- Բուժական կաբինետներ:

Կենցաղսպասարկման առաջնային ծառայություններ

- Վարսավիհանոցներ,
- Զինմաքրման ընդունման կետեր, լվացքատներ,
- Կոշիկի, հագուստի, կենցաղային տեխնիկայի վերանորոգման արհեստանոցներ:

Առևտրական

- Մանրածախ առևտրի խանութներ, տաղավարներ, կրպակներ:

Հասարակական սնունդ

- Արագ պատրաստվող ուտեստների խորտկարաններ,
- Ռեստորաններ (սահմանափակ նստելատեղերով),
- Սրճարաններ և բարեր (սահմանափակ նստելատեղերով):

Արտադրություն

- Փոքր բիզնեսի արտադրություններ, որոնք կապված չեն աղմուկի, պայթուցիկ, հրդեհավտանգ նյութերի և մթնոլորտի աղտոտման հետ,
- Հացի, հրուշակեղենի, ըմպելիքի, մթերքների (բացի մսից) փոքրածավալ արտադրություն,
- Արհեստագործական արտադրամասեր և արհեստանոցներ (ավանդական իրերի արտադրություն):

Գյուղատնտեսություն

- գյուղատնտեսական աշխատանքներ (այգեգործություն):

7.1.2. Կառուցապատման չափորոշիչներ

Առանձնատներ՝ տնամերձ հողամասերով,

- | | |
|--|---------|
| • Հողամասի մակերես (նվազագույն) | 1000քմ |
| • Մեկ կառուցապատման միավորի զբաղեցրած տարածք (առավելագույն) հողամասի ընդհանուր մակերեսի 1/3-ից ոչ ավելի, | - |
| • Հողամասի ճակատի նվազագույն լայնություն | - 25 մ: |

7.1.3. Կառուցապատման ծավալատարածական կարգավորիչներ

- | | |
|--|-------|
| • Շենքերի/շինությունների բարձրությունը (առավելագույն) | - 9մ |
| • Շենքերի/շինությունների զբաղեցրած տարածք (առավելագույն) | - 40% |
| • Հողամասի անջրանցիկ առավելագույն տարածք | - 70% |
| • Հողամասի նվազագույն կանաչ ծածկույթ | - 40% |

7.2. ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱԴԱՏՄԱՆ ԳՈՏԻ (ԲԿԳ)

Այս թաղամասերը նախատեսվում են քաղաքի կենտրոնական միջուկում հողի արժեքի բարձրացմանը գույճընթաց հողն առավել արդյունավետ օգտագործելու (բարձր խտությամբ կառուցապատման իրականացմամբ), ինչպես նաև քաղաքային միջավայրին հատուկ բնակելի կառուցապատման զարգացմանը նպաստելու և խրախուսելու համար:

7.2.1. Թույլատրված օգտագործման ձևեր

Բնակելի

- Բազմաբնակարան տներ՝ առանց տնամերձ հողամասերի:

Հյուրանոցային

- Հյուրանոցներ (սահմանափակ):

Կրթական հաստատություններ

- Մանկապարտեզներ, մանկամսուրներ,
- Միջնակարգ դպրոցներ:

Բուժական

- Բուժական կաբինետներ:

Վարչական, ֆինանսական, հիմնարկություններ և ծառայություններ

- Անհատական գրասենյակներ:

Կենցաղսպասարկման առաջնային ծառայություններ

- Վարսավիրանոցներ,
- Զիմմաքրման ընդունման կետեր, լվացքատներ,
- Կոշիկի, հագուստի, և կենցաղային տեխնիկայի վերանորոգման արհեստանոցներ:

Առևտրական

- Մանրածախ առևտրի խանութներ, տաղավարներ, կրպակներ:

Հասարակական սնունդ

- Ռեստորաններ (սահմանափակ),
- Սրճարաններ և բարեր (սահմանափակ),
- Արագ պատրաստվող ուտեստների խորտկարաններ:

Արտադրական

- Փոքր բիզնեսի արտադրություններ,
- Հացի, հրուշակեղենի, ըմպելիքի, մթերքների փոքրածավալ արտադրություն,
- Արհեստագործական արտադրամասեր և արհեստանոցներ (ավանդական իրերի արտադրություն):

7.2.2. Կառուցապատման չափորոշիչներ

Բազմաբնակարան տներ

- Ճակատի նվազագույն լայնություն - 12 մ
- Երկարությունը -չի սահմանափակվում

7.2.3. Կառուցապատման ծավալատարածական կարգավորիչներ

Բոլոր տիպի կառույցների համար

- Շենքերի/շինությունների բարձրությունը (առավելագույն) - 12 մ
- Շենքերի/շինությունների զբաղեցրած տարածք (առավելագույն) - 40%
- Հողամասի անջրանցիկ առավելագույն տարածք - 70%
- Հողամասի նվազագույն կանաչ ծածկույթ - 40%

7.3. ԽԱՌԸ ԿԱՌՈՒՑԱԴԱՏՄԱՆ ԳՈՏԻՆԵՐ (ԽԿԳ)

Այս գոտիները առանձնացվում են հիմնականում արդեն կազմավորված խառը՝ բնակելի և հասարակական կառուցապատում ունեցող թաղամասերի վերակառուցման և կանոնակարգման համար՝ քաղաքի հետագա դինամիկ զարգացմանը համընթաց: Այս գոտիները նախատեսվում են համաքաղաքային նշանակության գործառնությունների և բնակելի կառուցապատման խառը տեղակայման համար:

7.3.1. Թույլատրված օգտագործման ձևեր

Բնակելի

- Առանձնատներ տնամերձ հողամասերով,
- Բազմաբնակարան տներ՝ առանց հողամասերի:

Հյուրանոցային

- Ճանապարհամերձ տներ (վարձակալությամբ տրվող առանձնատներ),
- Հյուրանոցներ, մոթելներ (սահմանափակ հզորությամբ):

Կրթական հաստատություններ

- Մանկապարտեզներ, մանկամսուրներ,
- Վճարովի և կիրակնօրյա դպրոցներ:

Բուժական

- Բուժական կաբինետներ,
- Պոլիկլինիկաներ:

Վարչական, ֆինանսական և կոմունալ հիմնարկություններ և ծառայություններ

- Անհատական գրասենյակներ (օֆիսներ),
- Ոստիկանական տեղամասեր,
- Փոստատներ:

Կենցաղսպասարկման առաջնային ծառայություններ

- Վարսավիրանոցներ,
- Զիմմաքրման կետեր և լվացքատներ,
- Կոշիկի, հագուստի և կենցաղային տեխնիկայի վերանորոգման արհեստանոցներ:

Սշակութային, մարզական, հասարակական նշանակության հիմնարկություններ

- Գրադարաններ, թանգարաններ, ցուցահանդեսներ, պատկերասրահներ, արվեստի կենտրոններ,
- Ակումբներ և հասարակական հավաքատեղիներ, գիշերային ակումբներ,
- Թատրոններ, կինոթատրոններ:

Առևտրական

- Մանրածախ առևտրի խանութներ, տաղավարներ, կրպակներ:

Հասարակական սնունդ

- Ավանդական ուտեստների խոհանոցներ, պանդոկներ, խորտկարաններ, մառաններ, ճաշարաններ,
- Ռեստորաններ (սահմանափակ),
- Սրճարաններ և բարեր (սահմանափակ),
- Արագ պատրաստվող ուտեստների խորտկարաններ:

Արտադրություն

- Փոքր բիզնեսի արտադրություններ, որոնք կապված չեն աղմուկի, պայթուցիկ և հրդեհավտանգ նյութերի և արտանետումների հետ,
- Հացի, հրուշակեղենի, ըմպելիքի, մթերքների փոքրածավալ արտադրություն,
- Տնայնագործական արտադրություն,
- Արհեստագործական արտադրամասեր և արհեստանոցներ (ավանդական իրերի արտադրություն):

7.3.2. Կառուցապատման չափորոշիչներ

Առանձնատներ՝ տնամերձ հողամասերով

- Հողամասի թույլատրելի մակերես (նվազագույն) -1000 քմ
- Հողամասի ճակատի նվազագույն լայնություն - 25 մ

Բազմաբնակարան տներ՝ առանց հողամասերի

- Ճակատի նվազագույն լայնություն - 12 մ
- Երկարությունը -չի սահմանափակվում

7.3.3. Կառուցապատման ծավալատարածական կարգավորիչներ բնակելի տների համար

- Շենքերի/շինությունների բարձրությունը (առավելագույն) - 12 մ
- Շենքերի/շինությունների զբաղեցրած տարածք (առավելագույն) - 40%
- Հողամասի անջրանցիկ առավելագույն տարածք - 30%
- Հողամասի նվազագույն կանաչ ծածկույթ - 40%

այլ շենքերի /շինությունների համար

- Շենքերի/շինությունների բարձրությունը (առավելագույն) - 12 մ

- Շենքերի/շինությունների զբաղեցված տարածքը - չի սահմանափակվում,
- Հողամասի անջրանցիկ առավելագույն տարածք - չի սահմանափակվում,
- Հողամասի նվազագույն կանաչ ծածկույթ - չի սահմանափակվում:
- Մինչև 12 մետր բարձրության կառույցներ առաջին հարկերում հասարակական օբյեկտների տեղադրմամբ, թույլատրվում են գլխավոր փողոցների վրա:
- Վերոնշված տարածքներում բնակելի շենքերի համար առավելագույն թույլատրված հարկայնությունը 4 հարկ է:
- Կենտրոնական առևտրական և վարչական հրապարակների պարագծով հասարակական շենքերի բարձրությունը պետք է նախատեսել ոչ պակաս, քան 15մ,
- Բոլոր առաջին հարկերում հասարակական սպասարկման օբյեկտներ ունեցող շենքերը դրվում են կարմիր

գծի վրա:

7.4. ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՈՈՒՅԹՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՏԻ (ՀԳԶԳ)

Գոտին նախատեսվում է քաղաքի կենտրոնական միջուկի պահպանման, կանոնակարգման և պատշաճ զարգացման համար

7.4.1. Թույլատրված օգտագործման ձևեր

Կրթական, մշակութային, բուժական, հասարակական օգտագործման հիմնարկություններ

- Եկեղեցիներ, մատուռներ,
- Գրադարաններ,
- Թանգարաններ,
- Արվեստի կենտրոններ,
- Ցուցահանդեսներ,
- Պատկերասրահներ, արվեստի սրահներ,
- Ակումբներ և հասարակական հավաքատեղիներ,
- Թատրոններ և կինոթատրոններ,
- Ոստիկանական տեղամասեր,
- Փոստատներ,
- Միջնակարգ դպրոցներ,
- Մանկապարտեզներ, մանկամսուրներ,
- Անհատական գրասենյակներ (օֆիսներ),
- Կեզվախաղարաններ, սեղանի թենիսի, բիլիարդի դահլիճներ,
- Բանկեր, բորսաներ և դրամավարկային այլ հաստատությունների գրասենյակներ,
- Բուժական կաբինետներ,
- Պոլիկլինիկաներ:

Հասարակական սնունդ

- Ռեստորաններ (առանց սահմանափակումների),
- Սրճարաններ և բարեր (առանց սահմանափակումների),
- Բացօթյա ռեստորաններ, բարեր, սրճարաններ (առանց սահմանափակումների),
- Արագ պատրաստվող ուտեստների խորտկարաններ:

Բնակելի

- Բազմաբնակարան,
- Հյուրանոցային,
- Հյուրանոցներ (մինչև 50 հոգու համար):

Կրթական, մշակութային, կրոնական, հասարակական օգտագործման հիմնարկություններ

- Միջնակարգ դպրոցներ,
- Վճարովի և կիրակնօրյա դպրոցներ,
- Գիշերային ակումբներ:

Բուժական

- Պոլիկլինիկաներ:

Կենցաղային սպասարկման առաջնային ծառայություններ

- Վարսավիրանոցներ,
- Զիմնաքրման կետեր և լվացքատներ,
- Կոշիկի, հագուստի և կենցաղային տեխնիկայի վերանորոգման արհեստանոցներ:

Առևտրական

- Մանրածախ առևտրի խանութներ, տաղավարներ, կրպակներ:

Ոչ հիմնական շինություններ

- Ճարտարապետական փոքր ձևեր:

7.4.2. Կառուցապատման ծավալատարածական կարգավորիչներ

Բոլոր տիպի շենքերի/շինությունների համար

- Շենքերի/շինությունների բարձրությունը (առավելագույն) -12 մ
- Շենքերի/շինությունների զբաղեցված տարածք (առավելագույն - չի սահմանափակվում),
- Հողամասի անջրանցիկ առավելագույն տարածք - չի սահմանափակվում,
- Հողամասի նվազագույն կանաչ ծածկույթ - չի սահմանափակվում:

7.4.3 Լրացուցիչ պահանջներ

- Եթե շենքերի առաջին հարկերը բնակելի են, ապա այդ շենքերը պետք է դրվեն կարմիր գծից ներս,
- Եթե շենքերի առաջին հարկերը օգտագործվում են հասարակակն սպասարկման օբյեկտների համար, ապա այդ շենքերը պետք է դրվեն կարմիր գծով:

7.5. Բնապատկերային գոտի (ԲԳ)

Բնապատկերային գոտին ընդգրկում է քաղաքի տարածքի խոշոր այգիները, գյուղատնտեսական հողերը,

այգեպուրակային և շրային տարածքները, բոլոր պահպանվող և վերականգնվող լանդշաֆտները և հանդիսանում է քաղաքի բնապատկերների պահպանման հիմնական միջոցը:

7.5.1. Թույլատրված օգտագործման ձևեր

Մշակութային, մարզական, հասարակական օգտագործման հիմնարկություններ

- Բուսաբանական, մշակույթի, հանգստի և մանկական տարբեր տիպի այգիներ,

Առևտրական

- Մանրածախ առևտրի խանութներ, տաղավարներ, կրպակներ:

Հասարակական սնունդ

- Արագ պատրաստվող ուտեստների խորտկարաններ:

*Գյուղատնտեսություն**

- Գյուղատնտեսական մթերքների վերամշակում, արտադրություն,
- Գյուղատնտեսական աշխատանքներ (այգեգործություն),
- Գյուղատնտեսական աշխատանքներ (անասնապահական համալիրներ՝ ընտանի կենդանիների բուծում),
- Տնկարաններ,
- Անտառային տնտեսություն:

Ոչ հիմնական շինություններ

- Տաղավարներ,
- Ճարտարապետական փոքր ձևեր:

7.5.2. Կառուցապատման չափորոշիչներ

բոլոր տիպի կառույցների համար

- Հողամասերի նվազագույն չափերը՝ համաձայն գործող նորմերի:

7.5.3. Կառուցապատման ծավալատարածական կարգավորիչներ (գյուղատնտեսական նպատակային նշանակություն չունեցող հողերի համար)

Բոլոր տիպի կառույցների համար

- Շենքերի/շինությունների բարձրությունը (առավելագույն) - 12 մ
- Շենքերի/շինությունների զբաղեցրած տարածք (առավելագույն) - 5%
- Հողամասի անջրանցիկ առավելագույն տարածք - 10%
- Հողամասի նվազագույն կանաչ ծածկույթ - 90%

Բնակելի նոր կառուցումները արգելվում են:

7.6. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԱՉ ԳՈՏԻ (ՀՕԿԳ)

Համաքաղաքային նշանակության հասարակական կանաչ տարածությունների գոտիները ընդգրկում են համաքաղաքային նշանակության այգիները, պուրակները, ծառուղիները և այլ հասարակական նշանակության կանաչապատ տարածքները:

7.6.1 Թույլատրված օգտագործման ձևեր

Մշակութային, մարզական, հասարակական օգտագործման հիմնարկություններ

- Մշակույթի, հանգստի և մանկական տարբեր տիպի այգիներ,
- Կեզվախաղարաններ, սեղանի թենիս, բիլիարդի դահլիճներ, մարզադահլիճներ,
- Օգտագործման ձևեր
- Խաղաղաշտեր,
- Մարզաղաշտեր,
- Բացօթյա ռեկրեացիոն կառույցներ, լողի, թենիսի և այլ ակումբներ,
- Պուրակներ անվավոր չմուշկների և այլնի համար,
- Հրաձգարաններ (տիրեր):

Առևտրական

- Մանրածախ առևտրի խանութներ, տաղավարներ, կրպակներ:

Հասարակական սնունդ

- Արագ պատրաստվող ուտեստների խորտկարաններ,
- Ռեստորաններ, սրճարաններ և բարեր (սահմանափակ),
- Բացօթյա ռեստորաններ, բարեր, սրճարաններ (առանց սահմանափակումների):

Ոչ հիմնական շինություններ

- Տաղավարներ,
- Ճարտարապետական փոքր ձևեր:

7.6.2. Կառուցապատման չափորոշիչներ

Ոչ հիմնական շինությունների համար

- Հողամասի թույլատրելի մակերես (նվազագույն) - 50քմ,
- Մեկ կառուցապատման միավորի զբաղեցրած տարածք (նվազագույն) - 4քմ,
- Հողամասի ճակատի նվազագույն լայնություն - չի սահմանափակվում:

Հիմնական շինությունների համար

- Հողամասերի նվազագույն չափերը՝ համաձայն գործող նորմերի:

7.6.3. Կառուցապատման ծավալատարածական կարգավորիչներ

բոլոր տիպի շենքերի/շինությունների համար

- Շենքերի/շինությունների բարձրությունը (առավելագույն) - 8 մ,
- Շենքերի/շինությունների զբաղեցված տարածք (առավելագույն -10 %),
- Հողամասի անջրանցիկ առավելագույն տարածք - 20%,
- Հողամասի նվազագույն կանաչ ծածկույթ - 80%:

7.6.4. Լրացուցիչ պահանջներ

Բնակելի նոր կառուցումներն արգելվում են: Միայն պատմաճարտարապետական հուշարձանի կարգավիճակ ունեցող շենքերի պահպանում, վերականգնում (վերանորոգում) և ներքին վերակառուցում:

7.7. ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ (ՀՆԳ)

Հատուկ նշանակության գոտիները առանձնացվում են գործունեության հատուկ ռեժիմ (գործառնաբեր) պահանջող տարածքների համար:

7.7.1. Թույլատրված օգտագործման ձևեր

*Հատուկ նշանակության շենքեր, շինություններ:
Առևտրական*

- Մանրածախ առևտրի խանութներ, տաղավարներ, կրպակներ:

Հասարակական մեծահյուսի

- Սրճարաններ և բարեր, ոչ ավելի, քան 20 նստելատեղով,
- Արագ պատրաստվող ուտեստների խորտկարաններ:

7.7.2. Չափորոշիչներ

Բոլոր տիպի կառույցների համար

- Հողամասերի նվազագույն չափերը՝ համաձայն գործող նորմերի:

7.7.3. Կարգավորիչներ

բոլոր տիպի կառույցների համար

- Շենքերի/շինությունների բարձրությունը (առավելագույն) - 12մ,
- Շենքերի/շինությունների զբաղեցրած տարածք (առավելագույն) - չի սահմանափակվում,
- Հողամասի անջրանցիկ առավելագույն տարածք - չի սահմանափակվում,
- Հողամասի նվազագույն կանաչ ծածկույթ - չի սահմանափակվում:

7.8. ԱՐՏԱՔԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԳՈՏԻ (ԱՏԳ)

Արտաքին տրանսպորտի գոտին նախատեսվում է քաղաքի տարածքում արտաքին տրանսպորտի անմիջական ներկայությունը ապահովելու համար, դրա կառույցների, ենթակառուցվածքների և հարակից տարածքների օգտագործման ռեժիմների կարգավորման և կանոնակարգման համար:

7.8.1. Թույլատրված օգտագործման ձևեր

Ավտոձառայություններ և տրանսպորտային կառույցներ

- Ավտոբուսային կայարաններ,
- Տրանսպորտի հավաքակայաններ և կառույցներ:
- Բենզալիցքավորման կայաններ,
- Ավտոկանգառներ,
- Ավտոտնակներ:

Հյուրանոցային

- Հյուրանոցներ (սահմանափակ),
- Սրճեյլներ (սահմանափակ):

Բուժական

- Բուժական կաբինետներ:

Վարչակառավարման, կապի, ֆինանսական, հասարակական օգտագործման հիմնարկություններ

- Ոստիկանական տեղամասեր,

- Փոստատներ:

Կենցաղային սպասարկման առաջնային ծառայություններ

- Վարսավիրանոցներ,
- Զիմնաքրման կետեր և լվացքատներ,
- Կոշիկի, հագուստի և կենցաղային տեխնիկայի վերանորոգման արհեստանոցներ:

Առևտրական

- Մանրածախ առևտրի խանութներ, տաղավարներ, կրպակներ:

Հասարակական մեծեր

- Ռեստորաններ (առանց սահմանափակումների),
- Սրճարաններ և բարեր (առանց սահմանափակումների),
- Բացօթյա ռեստորաններ, բարեր, սրճարաններ (առանց սահմանափակումների),
- Արագ պատրաստվող ուտեստների խորտկարաններ:

7.8.2. Կառուցապատման չափորոշիչներ

Բոլոր տիպի կառույցների համար

- Հողամասերի նվազագույն չափերը՝ համաձայն գործող նորմերի:

7.8.3. Կառուցապատման ծավալատարածական կարգավորիչներ

Բոլոր տիպի կառույցների համար

- Շենքերի/շինությունների բարձրությունը (առավելագույն) - 12մ
- Շենքերի/շինությունների զբաղեցրած տարածք (առավելագույն) - չի սահմանափակվում
- Հողամասի անջրանցիկ առավելագույն տարածք - չի սահմանափակվում
- Հողամասի նվազագույն կանաչ ծածկույթ - չի սահմանափակվում:

7.9. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՏԻ (ԱԳ)

Այս գոտին նախատեսվում է քաղաքի տարածքում կազմակերպվող արտադրությունների համար համապատասխան մեկուսացված մասնագիտացված տարածքներ ապահովելու համար:

7.9.1. Թույլատրված օգտագործման ձևեր

Արտադրական

- Արտադրական մասնաշենքեր, փոքր բիզնեսի արտադրություններ, որոնք կապված չեն աղմուկի, պայթուցիկ և հրդեհավտանգ նյութերի և մթնոլորտի աղտոտման հետ,
- Հացի, հրուշակեղենի, ըմպելիքի, մթերքների (բացի մսի) արտադրություն,
- Տնայնագործական արտադրություն, սեփական արտադանքի առևտուր,
- Արհեստագործական արտադրամասեր և արհեստանոցներ (ավանդական արհեստներ):

Ավտոծառայություններ և տրանսպորտային կառույցներ

- Բենզալիցքավորման կայաններ,
- Ավտոկանգառներ,
- Ավտոտնակներ:

7.9.2. Կառուցապատման չափորոշիչներ

Բոլոր տիպի կառույցների համար

- Հողամասերի նվազագույն չափերը համաձայն՝ գործող նորմերի:

7.9.3. Կառուցապատման ծավալատարածական կարգավորիչներ

Բոլոր տիպի կառույցների համար

- Շենքերի/շինությունների բարձրությունը (առավելագույն) - 12մ
- Շենքերի/շինությունների զբաղեցված տարածք (առավելագույն) - չի սահմանափակվում,
- Հողամասի անջրանցիկ առավելագույն տարածք - չի սահմանափակվում,
- Հողամասի նվազագույն կանաչ ծածկույթ - չի սահմանափակվում:

7.10. ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՏԻ (ՀԳ)

Այս գոտին նախատեսվում է հուշարձանների պահպանման և մեմորիալ գոտիների կազմակերպման տարածքներ ապահովելու համար:

7.10.1. Թույլատրված օգտագործման ձևեր

- Հուշարձաններ,
- Մեմորիալներ,
- Գրեզմանատներ:

8. ԿԱՌՈՒՑԱԴԱՏՄԱՆ ԿԱՆՈՆԵՐ

Սահմանված են տեղական պայմաններից բխող կանոններ, որոնք պարտադիր են նախագծվող ողջ

տարածքում կիրառելու և բոլոր գոտիների համար: Դրանք հիմնականում կարգավորում են կառուցապատման և շահագործման ընթացքում առաջացող միջավայրի համալիր կանոնակարգման խնդիրները, այն է.

- ընդունված սկզբունքներին չհամապատասխանող կառույցների աստիճանական վերափոխման մեխանիզմները,
- բնապահպանական միջոցառումների իրականացումը,
- գոտևորման նախագծով ներկայացված պահանջների իրականացումը:

8.1. ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈՂՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Բոլոր շինարարական, վերակառուցման, վերականգնման և վերանորոգման աշխատանքները պետք է կատարվեն միայն գործող ընթացակարգերով հաստատված քաղաքաշինական և ճարտարապետաշինարարական նախագծերով:

8.2. ԾԵՆՔԵՐԻ ԾԱԿԱՏՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԴԱՐԱՆՔ

- Ծենքերի ճակատների (փողոցային և բակային) արտաքին հարդարանքի հետ կապված բոլոր շինարարական և վերանորոգման աշխատանքները պետք է կատարվեն միայն գործող ընթացակարգերով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերով:

8.3. ԾԻՆԱՆՅՈՒԹ

- Պատմաճարտարապետական արժեք ներկայացնող շենքերի/շինությունների բնական սրբատաշ քարերից կառուցված ճակատային պատերը ներկել կամ երեսապատել արգելվում է:
- Այլ շենքերի համար, որպես կանոն, պետք է օգտագործել սև, վարդագույն, սպիտակ երանգների շինանյութեր:
- Արտաքին ճակատների ձևավորման համար արգելվում է դեղին (բացի ոսկեգույնից և օխրայից), կապույտ և կանաչ երանգների օգտագործումը:

8.4. ՆԿՈՒՂՆԵՐ ԵՎ ԿԻՍԱՆԿՈՒՂՆԵՐ

- Բնակելի շենքերի նկուղային և կիսանկուղային հարկերը փողոցի կողմից մեկուսացված մուտքեր չպետք է ունենան:
- Բոլոր շենքերի կիսանկուղների պատուհանների գոգերը մայթից պետք է առնվազն 30 սմ բարձր լինեն:

8.4. ԾԵՆՔԵՐԻ ԾՁԱՄՈՒՏՔԵՐ

- Ծենքերի շքամուտքերի աստիճանները փողոցի կարմիր գծից դուրս չպետք է դրվեն:

8.4. ՏԱՆԻՔՆԵՐ

- Լանջավոր տանիքների կիրառման դեպքում դրանց առավելագույն թեքությունը (i) պետք է ընդունել - 0.5:
- Լանջավոր տանիքների գագաթի բարձրությունը պետք է սահմանափակվի կառույցի խորության կեսի չափով:
- Լանջավոր տանիքներում ձեղնահարկը որպես բնակելի տարածություն օգտագործելու դեպքում փողոց դուրս եկող պատուհանները պետք է արգելվեն:

8.5. ԳՈՎԱԶԴ

- Հուշարձաններ չհանդիսացող շենքերին կցված գովազդային վահանակների մակերեսը չպետք է գերազանցի շենքի ճակատային պատի 10 տոկոսը:
- Փողոցներում տեղադրվող առանձին կանգնած գովազդային վահանակները պետք է տեղադրվեն մոտակա կարգավորվող խաչմերուկից առնվազն 50 մ հեռավորության վրա:

8.6. ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐ ԵՎ ԱՆՎԱՆԱՏԱԽՏԱԿՆԵՐ

- Փողոցների անվանատախտակները պետք է տեղադրվեն ստանդարտ չափերով 50 x 15սմ միասնական հատուկ նախագծի համաձայն:
- Ծենքերի համարների չափերը պետք է ընդունվեն`

ա) լուսավորությամբ, կլոր` տրամագիծը - 30սմ

բ) առանց լուսավորության` քառակուսի -15 x 15սմ:

Հիմնարկությունների անվանատախտակները և բնակիչների անվանատախտակները կցվում են միայն շքամուտքերի դռների:

8.7. ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

- Մինչև 12 մ լայնություն ունեցող փողոցներում լուսավորության սյուների կիրառումն արգելվում է: Այս կարգի փողոցներում լուսավորությունը պետք է կազմակերպվի պատի աշտանակներով:

8.8. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՆԳԱՈՆԵՐ

- Տրանսպորտի միջոցների կանգառները պետք է տեղավորվեն, որպես կանոն, միասնական նախագծով թեթև կոնստրուկցիաներից կառուցված, թափանցիկ պատերով կամ սյուներով շինությունների մեջ: Առավելագույն չափերը` երկարությունը- 6.0 մ, լայնությունը- 2.4 մ:

8.9. ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԾԵՆՔԵՐԻ ՄԻՋԵՎ

Բնակելի և հասարակական, ինչպես նաև արտադրական շենքերի միջև եղած հեռավորությունը պետք է ընդունել հիմնվելով արևի ճառագայթման քանակի (ինսոլյացիայի) և լուսավորվածության հաշվարկների վրա, ինչպես նաև հակահրդեհային պահանջներին համապատասխան:

2-3 հարկանի բնակելի շենքերի երկար կողմերի միջև հեռավորությունը (կենցաղային խզումներ) պետք է ընդունել 12 մ-ից ոչ պակաս: Այս շենքերի երկար կողմերի և բնակելի սենյակներից պատուհաններ ունեցող կողմնակատների միջև` 12 մ-ից ոչ պակաս: Նշված հեռավորությունները կարող են կրճատվել ինսոլյացիայի և

լուսավորության նորմերը պահպանելու դեպքում, եթե ապահովված է պատուհանից պատուհան բնակելի սենյակների անտեսանելիությունը:

8.9.1. Շենքերի տեղադրությունները

Շենքերը տեղադրել քամիների գերակշիռ ուղղությունների հաշվառումով՝ կողմնակատներով դեպի վերջիններս (տեղի բնակլիմայական պայմանների հաշվառումով):

8.10. ԱՐՄՈՒԿԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՄԱԿԱՐԴԱԿ

Բոլոր գոտիներում, որտեղ թույլատրված է բնակելի կառուցապատում, աղմուկի թույլատրելի մակարդակը չպետք է գերազանցի 55 դԲԱ (ցերեկը) և 45 դԲԱ (գիշերը):

8.11. ԳՈՏԵՎՈՐՄԱՆԸ ՀՀԱՄԱԴԱՏԱՍԽԱՆՈՂ ԿՈՒՈՒՑԱԴԱՏՄԱՆ ԿԱՐԳՎՈՐՈՒՄ

- Գոտևորմանը չհամապատասխանող բոլոր տեսակի օրինական համարվող օգտագործման ձևերը, որոնք գոյությունը պահպանել են մինչև սույն նախագծի հաստատման տարեթիվը, այսուհետև պետք է կարգավորվեն միայն սույն կանոնների պահանջներին համապատասխան:
- Գոտևորմանը չհամապատասխանող բոլոր տեսակի օրինական համարվող շենքերի և կառույցների ընդարձակում չի թույլատրվում:
- Գոտևորմանը չհամապատասխանող 6 ամսից ավելի լքված և չօգտագործվող օրինական համարվող կառույցների հետագա օգտագործման ձևը պետք է որոշվի համաձայն այն հիմնական գոտու թույլատրելի օգտագործումների կանոնների, որտեղ այն գտնվում է:
- Գոտևորմանը չհամապատասխանող օրինական համարվող կառուցապատման ձևերը կարող են վերանորոգվել, եթե բոլոր կառուցվածքային փոփոխումները կատարվում են միայն գործող քաղաքաշինական օրենսդրության համաձայն:
- Եթե գոտևորմանը չհամապատասխանող օրինական համարվող կառույցի վերանորոգման արժեքը գերազանցում է նրա տեղափոխման արժեքի 50%-ը, ապա այդ կառույցը պետք է արգելվի:

8.12. ԿՈՒՈՒՑԱԴԱՏՄԱՆ ԹՈՒՅԼՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օգտագործման ձևերի համար թույլտվությունների կառուցվածքը հիմնվում է «ընդունված գոտի-թույլատրելի հողօգտագործման ձև» սկզբունքի վրա: Սահմանվել են հետևյալ թույլտվության ձևերը՝

- թույլատրվում է,
- հատուկ թույլտվություն,
- չի թույլատրվում:

Թույլատրված օգտագործման ձևերը այն կառուցապատման և հողօգտագործման թույլատրված տիպերն են, որոնք արդեն վերջնականորեն սահմանվել են արդեն նախագծային փուլում, հողատեղակայման հիմք են հանդիսանում համապատասխան գոտիներում և լրացուցիչ քննարկման կարիք չունեն:

Հատուկ թույլտվության ընթացակարգ են պահանջում կառուցապատման և հողօգտագործման այն տիպերը, որոնք բնութագրերը տարբերվում են սահմանված գոտիներում թույլատրելի օգտագործման ձևերից և որոնք, այնուամենայնիվ, կարող են կիրառվել այդ գոտիներում հատուկ պայմաններով և համապատասխան հասարակական քննարկումներից հետո:

Հատուկ թույլտվությամբ օգտագործումը գոտիներում թույլատրվում է համայնքի ավագանու հավանությամբ և համայնքի ղեկավարի համաձայնությամբ՝ հատուկ ձևակերպված հատուկ պայմաններով:

9. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Աստիճանական զարգացման հիմնական գոտիներ՝ հիմնական գոտիներ, որոնք առանձնացվում են որոշակի տարածքների փոլ առ փոլ երկարաժամկետ զարգացման և կառուցապատման խրախուսման համար:

Առանձնատներ տնամերձ հողամասերով՝ բնակելի միավոր մեկ ընտանիքի համար, որը տեղակայված է իր սեփական տնամերձ հողամասում: Բազմաբնակարան տներ՝ 2 և ավելի բնակարաններ միավորված մեկ շենքում:

Ինսոլյացիա՝ տարածքներում և սենյակներում արևի ուղիղ անընդհատ ճառագայթման տևողության նորմատիվային պահանջ:

Լրացուցիչ պահանջներ՝ նախատեսվում են տարբեր գոտիներում տեղադրվող այն օգտագործման ձևերի համար, որոնք բնույթը մասամբ չի համապատասխանում տվյալ գոտու ներկայցվող պահանջներին և դրանց գործառնությունը հիմնականում կապվում է հատուկ պայմանների կիրառման հետ:

Կանաչ ծածկույթ՝ բուսական ծածկույթ (ծառեր, թփուտներ, խոտաբույսեր և այլն):

Կառուցապատման/հողօգտագործման չափորոշիչներ և կարգավորիչներ՝ սահմանում են տվյալ գոտու հողօգտագործման և կառուցապատման պահանջներին համապատասխանող բնութագրերի համակարգը, որոնցով կանոնակարգվում է տարածքի յուրացման ինտենսիվությունը, կառուցապատման խտությունը, կառույցների հարկայնությունը, գեղագիտական պահանջները: Կարգավորիչների պարամետրերը հիմնվում են օրենսդրական և պետական նորմատիվ փաստաթղթերի վրա, տեղայնացվում են՝ ելնելով յուրաքանչյուր գոտու յուրահատուկ պահանջներից և փոփոխվում են գոտուց գոտի:

Հակահրդեհային պահանջներ՝ շենքերը, կառույցները հրդեհներից պաշտպանելու համար կառուցման և այլ միջոցառումների նորմերով հաստատված պարտադիր կարգ:

Համալիր հատակագծման հիմնական գոտիներ՝ գոտևորման նախագծում առանձնացված շրջաններ, որոնց նպատակն է՝

- խրախուսել տարածքի բազմաբնույթ օգտագործումը,
- ապահովել համաքաղաքային համալիրների կառուցումը,
- հատուկ նախագծվող համալիրները ներդաշնակորեն ինտեգրել կազմավորվող քաղաքաշինական միջավայրում:

Համաքաղաքային նշանակության փողոցներ՝ հաղորդակցային կապ բնակելի, արդյունաբերական շրջանների և հասարակական կենտրոնների, ինչպես նաև մայրուղային փողոցների, քաղաքային ճանապարհների և ընդհանուր օգտագործման ճանապարհների միջև:

Շրջանային նշանակության փողոցներ՝ տրանսպորտային և հետիոտն կապ բնակելի շրջանների, բնակելի և արդյունաբերական շրջանների, ինչպես նաև հասարակական կենտրոնների միջև, ելքեր դեպի մայրուղային փողոցներ:

Տեղական նշանակության փողոցներ՝ տրանսպորտային (առանց բեռնատար և հասարակական

տրանսպորտի բացթողման) և հետիոտնային կապ բնակելի շրջանների տարածքներում, ելքեր դեպի մայրուղային փողոցներ և շարժման կարգավորումով ճանապարհներ:

Երթևեկության անցուղարձ՝ միավոր ժամանակահատվածում (օր, ժամ) ճանապարհի որևէ կտրվածքով հանդիպակաց ուղղություններով անցնող ավտոմոբիլների քանակը:

Ճանապարհի բեռնվածության մակարդակ՝ երթևեկության անցուղարձի հարաբերությունը ճանապարհի թողունակությանը:

Երթևեկային մաս՝ ճանապարհի մակերևույթի շերտ, որի սահմաններում կատարվում է ավտոմոբիլների երթևեկությունը:

Կարմիր գիծ՝ շենքերն ու շինությունները փողոցներից անջատող սահմանը, որով սահմանվում է նաև գլխավոր և երկրորդական փողոցների, ներառյալ մայթերի լայնությունը:

Մայթի բանուկ մաս՝ փողոցի մայթերի հետիոտնի շարժման համար հատկացված շերտ:

Հողամաս՝ որոշակի սահմաններ ունեցող հողատարածք, որի վրա տարածվում է սեփականության իրավունքը:

Հողամասի անջրանցիկ տարածք՝ հողամասի այն հատվածը, որի բուսական բնաշերտը ծածկված է արհեստական կառույցներով (շենք, մայթ, սալարկ):

Հողամասի ճակատ՝ հողամասի կարմիր գծին հարող կողմ:

Հիմնական գոտիներ՝ գոտևորման նախագծում առանձնացված շրջաններ, որտեղ սահմանվում են տվյալ տարածքի գերակշիռ օգտագործման և կառուցապատման կանոնները: Նույն տարածքային միավորին պետք է համապատասխանի միայն մեկ հիմնական գոտի:

Ձեղնահարկ՝ լանջավոր տանիքի ներքին տարածությունը:

Նորմ՝ նախագծման և շինարարության համար սահմանված պարտադիր կարգ:

Շենքի բարձրություն՝ մայթի մակերևույթից մինչև քիվի վերին եզրն ընկած ուղղաձիգ հեռավորությունը:

Ոչ հիմնական շինություն՝ կրպակներ, տաղավարներ, ճարտարապետական փոքր ձևեր:

Շրջանային նշանակության փողոց՝ երթևեկելի և հետիոտն կապ բնակելի և այլ գոտիների միջև, ինչպես նաև ելք դեպի մայրուղի:

Սանիտարահիգիենիկ պահանջներ՝ բնակվելու տարածությունների՝ շրջակա միջավայրի սահմանային թույլատրելի վիճակներին համապատասխանության պահանջներ:

Հատուկ թույլատրություն՝ կառուցապատման և հողօգտագործման տեսակները, որոնք բնութագրերը տարբերվում են գոտիներում թույլատրելի օգտագործման ձևերից և որոնք, այնուամենայնիվ, կարող են կիրառվել այդ գոտիներում հատուկ պայմաններով և համապատասխան հասարակական քննարկումներից հետո:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-Նախարար**

Մ. Թոփուզյան

ԿՈՏԱՅԵԻ ՄԱՐԶԻ ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆԵԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Էջ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27